Կ. 51. Սրաբ և թոքերի հարաբերությունը. Cd—սրաբ, Pv—աջ և ձախ թոքերը. Arp—թոքային զարկերակի, Tr—առոտակի ծունդը, H—առոտա, Sd և Scg—աջ և ձախ յերականակառակին յերակները, Տd և Տg—աջ և ձախ զգերանները, Vcs—գլուխ սնամեջ յերակի, Vci—սարուն սընամեջ յերակի, Sd և Sg—աջ և ձախ յերակների սարունը, Scd և Cg—աջ և ձախ շնչերակներ, Tr—զլուտվոր շնչափոլտնը նրանց միջուն արյունը շարժվի, սիրտը պետք է հսկա ուժ գործ գնի: Նրա աշխատանքից մերամբողջ մարմնը ցնցվում է, մենք ալզ չենք

նկատում, վորովինեակ վարժվել ենք: Եթերը տեղալորպած է կրծքի վանդակում, յերկու թոքերի մեջտեղը ավելի սուսիկ ձախ կողքին վերսկը պատած է հարթ ու բարակ թաղանթով, վոր կոչվում է սրբածարիկ:



Կ. 52. Շրջանառության բնորմանուր սխեման. OD—աջ սախախորեր, VD—աջ սրտախորդը, OG—ձախ սախախորեր, VG—ձախ սրտախորդը, AO—առոտա, AH—Սարգի զարկերակը, AM—աղիքային զարկերակը, AR—յերիկամարտին պ. Ա—մյուս որդաններից գնացող պ. Օ. V.—օրդաններից վերադարձները. VR—յերիկամարտին յերակը. P—զաներակ. VH—յարդարդին յերակը. VCS—սանամեջ յերակը. Arp—թոքային զարկերակը. Vp—թոքային յերակը. PO—թոքերի խողովակը. Լո—մարսողության խողովակը. TH—կրծքի աջատար խողովակը. R—յերիկամը. Ra—փայծաղը.




Ինչպես տեսանք, մարդու մարմնի մեջ յերկու տեսակ արյուն կամ արյուն կամ ակիկային ճիշտը՝ զարկերակային և փշացած արյուն կամ՝ յերակային, Այդ յերկու տեսակ արյունները չպետք է իրար խառնվեն: Այդ պատճառով սիրտը վոչ թե հասարակ մղիչ է, այլ կրկնակի մոլիչ: Սրտի միջով անցնում է մի պատ, վոր վերսկը ներքեւ սիրտը բաժանում է յերկու մասի՝ աջ և ձախ: Աջ կողմից դուրս մակարդակին արյունը կակ ձախից՝ զարկերակայինը: Ցուրաքան-


Աօխատանիք.՝ Նկարից այս սխեմանը ժենդացրած է գունավոր:

շուր կեսը դարձյալ բաժանված և յերկու մասի կամ հարկերի: Վերին  
հա կը կոչվում և նախուու, իսկ ստորինը՝ սրախուու: Հետեարար  
մ. բու սիրան ունի յերկու նախախորշ աջ և ձախ: յերկու սրան  
խորշ—աջ և ձախ, իսկ ամրող սիրան մի հաստիուց որդան եւ:

Նախախորշի և սրախորշի արանքում կա մի անցք, վոր առան-  
ձին փական ունի: Փականները միախ մի կողմն ևն բացվում և աղատ



Նկ. 54. Եերա աճին համա կար ին  
գլխախոր անոթները: Ա'—զգե-  
ամկերը. Sed—Սէդ ն անոթապա-  
կամուրին. Cs—իլիք ն անաթի. Ը'—  
ստորին սամանը. Sh—յարդ, ե-  
ամկը. Vr—գլուխուու. Տօ, Ա, Շ—  
մասուության խողովակը զե-  
րաւորձող յերախոր. Մէ—յերի-  
կամարժուն. Լd և Լց—աղուրերը.  
Ք—թթերան. ՕԾ—աջ նախա-  
խորշ. Վd—սրախորշ. ԱԾ—ար-  
ամ. F—մարդ. R—յերկերմա-



Նկ. 55. Փականները, գորոնք զանվում  
են զարկերակները հիմքերի մոտ, գոր-  
ուսակը արյանն արդեւ նորից սրաս-  
խորշ յետ զանալու: Ա. փականները  
բաց են՝ արյունն անցնում են. Բ. փա-  
կանները փակ են, արյունը չի կարող  
ճանապարհը փոխել. Ը. զարկերակը բաց  
և արած և զբացը յերկում են փական-  
ները. Ծ. նույն յերկ փականը վերեկց  
նայած, յերը նրանք փակ են:


Եերպով արյունը բաց են թողնում նախախորշից—սրախորշը, բայց  
զեաի յետ՝ սրախորշից—նախախորշն արյունը մտնել չի կարող, վո-  
րովհետեւ հենց ինքը հրետով փականները՝ փակում ե անցքը. ճիշտ այն-  
պես, ինչպես յերեխաններն ահագին խորով դրոհ են տալիս դեպի դուռը  
սենյակից զուրս զալու համար, բայց վորովհետեւ զուռը զեաի ներս ե  
բացվում, նրանց հրանց հրանցուից փակում ե, վորքան ճնշումն ուժեղ ե,  
այնքան նա ամուր և փակում և ալլես զնալու վոչ մի հնարավորու-

թուն չի լինում: Սրտին տվելի մանրամասն ծանոթանան ու համար,  
շատ հարաւոր և ուղղակի վերցնել վոչխարի կամ հորթի սիրտը, կտրա-  
տել և դիտել բոլոր բաժանուուն ներն ու փականները:

Սրյան շարժումը մարսնի մեջ կատարվում է հետեւալ ձեռվի: Մար-  
մնի բոլոր մասերից վիշացած արյունը հավաքվում է աջ նախախորշը  
Սրտի պատերի մկանները սեղմվում են և այլու նը հրում զեաի սրտա-  
խորշը: Աջ սրտախորշն ել իր հերթին սեղմվում ե, արյունն մուր պիտք  
և զնա, զեաի յետ՝ ն խախորշը հոսեւ չի կարող, վորովհետեւ փական-  
ները խանգարում են: Ոնում և սի ճանապարհ, մի հաստ արյունա-  
տար անոթ, վոր աջ սրտախորշից զուրս գուրով զնում և զեաի թուերը:  
Սրյան այդ ճանապարհով թափակում ե թոքերի մեջ և մասնաւմ, զառ-  
նում և զարկերակային, զառ-կարքերագույն: Մաքրված արյունը նո-  
րան թոքերից վերադառնում է սրտը, բայց  
այս անգամ արդեն միուս ձախ կեսը և լըց-  
վում և ձախ և ախախորշը: Ձախ նախա-  
խորշը սեղմվելով, արյունը հրում և զեաի  
սրտախորշը: Սրտախորշի պատերը շատ  
հաստ են և կծկվում են հսկայական ուժով,  
վորի ճնշման ազդեցությամբ արյունը դուրս  
են սղում մեկ ուրիշ մեծ անոթի մեջ: Այդ  
հաստ պատ ունեցող գիսավոր զարկերակն  
ե, վոր կոչվում և պարագան ըրանից բաժան-  
վում են ափերի բարակ զարկերակներ և տա-  
րածվում են ամրող սարմնի մեջ: Սրյանը  
հոսում և վուսների, ծեփերի, գլխի և ներ-  
քին բուսոր որգանների մեջ և ամեն տեղ  
տարածում է իր բրիֆամիերի: Զարկերակների  
ամեն մի ճյուղը բարակում և զանանում  
մազից ել ափերի շարակը նրանց թվուն  
աշխան շատ ե, վոր ամրությամբ մինչնը բանցի  
նման պատում են: Դրանք կոչվում են մա-  
զանոթներ: Մարմնի վոր մասն ել, վոր ասե-  
զով ծալենք, կհանդիպենք սիքանի մազա-  
նոթների, զորոնք կպատուին և արյունը  
նըանց միջից գուրս կնուի:

Զարկերակների միջով արյունն ավելի արագ է հոսում: Առօսալի  
միջով մի վայրկանուու մոտ կես սեար տարածություն և անցնում:  
Վորքան սրտից հոսու, ալնքան անոթները բարակ են, և այնքան հո-  
սանքը զանդագում ե: Մազանոթների մեջ նա 8/10 անդամ ավելի  
զանդագ է հոսու, քան առօսալի մեջ, մոտավորապես զրկանի ժամա-  
նուցից վայրկաններ ցույց ավող սլաքի արագությամբ:

Աւտոասամբ:—Նկարեցներ այս սինմանները մեծացրած:



**Մազանոթների** մեջ արյունը մեծ փոփօխություն և կրում: Այս-  
տեղ նա իր թժվածնի մի մասը տալիս և մարմնին և աստիճանաբար  
դասնում և յերակալին, մուգ գուրչի: Այդ յերակալին արյունը մազա-  
նոթներից հավաքվում և յերակների մեջ, վորութ իրար մեջ թափվե-  
լով դասնում են ավելի և ավելի հաստ: Վերջապես մարմնի ստորին  
կեսի արյունը հավաքվում և սուօրին սնամեջ յերակի մեջ, իսկ վերևի  
կեսինը՝ վերին սնամեջ իր սկի մեջ: Այդ յերկու լուրակներով արյունը  
նորից հավաքվում է սրտի աջ նախախորը, այնտեղից իշխում աջ  
սրտախորշը, հետո թռքերը, այնտեղից սրտի ձախ մասը, մի խոսքով,  
կատարվում է շրջանառություն նույն հին ճանապարհներով:

Ահա սրտի կատարած աշխատանքը, վոր տեսում և գիշեր ու ցե-  
րեկ: Մի բովելում նո 70 անգամ կծկվում է (լսեցնք գորևե սեկի մը ըր-  
տի բարախումը և տեսնք՝ ի՞նչ ձախներ և հանում): Սրտի ասեն մի  
կծկումից արյունը զարկերակերի մեջ կարծես ցնցվում է: Սրտի ալղ  
հարգած փոխանցվում է զարկերակների մեջ, վոր սենք անվանու-  
մանը պարագացած է սրտի ամեն մի հարվածը համապա-  
ռախանում և սրտի մեկ կծկում մինչ ը ձեր ալղությունը:

Հին ժամանակներում չի եղին հասկանում սրտի նշանակությունը  
և նրա կատարած աշխատանքը: Մեզնից 300 տարի առաջ անգիտացի  
բժիշկ Վիլյամ Հարթեյր գտավ և բացատրեց առյան շրջանառության  
նշանակությունը: Մինչեւ այդ՝ սարգիկ, որինակ մտածում եին, թե  
սրբտն արյունը տաքացնող մի գործիք է, վոր իրը թե նա իր շար-  
ժումներով և տաքացնում (ինչպես և տաքանում մեր արյունը):

### գ. Շնչառության յեվ բամերը

1. Ի՞նչու համար և Շնչառությունը: Շնչառությունը  
մարդու կյանքի համար շատ անհրաժեշտ եւ Մենք մեր ամբողջ կյան-  
քում անընդհատ շնչում ենք: Շնչառությունը չի կարելի կանգնեն եւ  
նույնիսկ մի քանի բովել (փորձեցնք): Զոռով շնչառություն արգե-  
լին անխռուսարելի մաս կառաջացնի (թվեցնք, լիմե գիտեք այդպիսի  
դիպեր):

Վորպեսպի հասկանալի լինի, թե ինչու մարդուն անհրաժեշտ և  
շնչել, նախ և առաջ կարեոր և զիտենալ թե շնչելու ժամանակ ի՞նչ  
փոփոխության և յենթարկվում ողք: Մենք արգեն զիտենք սեր ներ-  
և նշանակությունը մեր սրբությունը՝ նա կազմված և թթվածնից, բորակա-  
ծնից և չնչին քանակությամբ ածխաթթվից իսկ ի՞նչ բաղադրություն  
ունի արտաքին գործը պարագանակ չափանիք սպասելու մեջ կամ  
ուղարկությունը առաջարկությունը ամենալավ կամ ամենալավ առաջարկությունը մեջ տեղադրելու մեջ ամենալավ առաջարկությունը մեջ տեղադրելու մեջ:

Իերցընք մի ապակե խողովակ, նրա մի ծայրը դրեք ձեր բերանը և  
փշեցնք: Զեր արտաշնչած ողք ջրի միջով անցնելիս անմիջապես նրան  
պղտորում եւ նսկ կը աշուրը պղտորել կարող և ածխաթթու գաղը  
Նշանակում եւ արտաշնչած ողք սեջ շատ ածխաթթու գաղ կա:

Արեմն, Շնչառության ժամանակ մեր մարմնի մեջ մտնում և ըրվա-  
ծին, իսկ դուս և գալիս ածխաթթու գաղ: Յերբ մարդը շնչում է, նո-  
փախում և շրջալատող ողք բաղադրությունը

Բնության մեջ մի ուրիշ գործողություն ել և կատարվում, վոր-  
քողորովին նույն ձևով փոփոխում և ողք բաղադրությունը: Այդ ալ-  
եռան և Մենք գիտենք, վոր այբան ժամանակ ևլ թթվածնին և ծախս-  
վում և ածխաթթու գաղ գոյասում: Այդ պատճառով կարող ենք յեն-  
թաղբեր վոր շնչելու և այրվելու մեջ կա մի գորոշ նմանություն: Իս-  
կապես, այդ նսմությունը շատ մեծ է: Խնչպես զիտենք, փայտ, մոթ  
կամ մի կտոր թուղթ այրելիս ողք թթվածնը միանում և այն ածխա-  
ծնի հետ, վոր գտնվում և ալրվող նյութերի մեջ: Բոլորովին նույն-  
ձևով ել յերբ շնչառության ժամանակ թթվածնին ընկնում և մեր  
մարմնի մեջ, այնտեղ սիրանում և ածխածնի հետ, ստացվում և ածխա-  
թթու գաղ, վորը և սենք արտաշնչում ենք: Գլխագոր տարբերու-  
թյունն այն է, վոր փայտը, մոծը և թուղթը շատ արագ են ալրվում  
ուժեղ կերպով բոցավազով: Ու ջերմություն արձակում, իսկ այ-  
նյութերը, վորոնք մեր սարմնի ներսում են թթվածնի հետ միանում:  
Կրանք շատ գանդաղ և աստիճանաբար թթվածնում են: Ահա թե ինչն-  
շնչառությունը լրբանն հասնամատում են դանդաղ այրման հետ (գան-  
գաղ, առանց բոցավազման այրվելու ու րիշ ի՞նչ որինակներ զիտենք):


Յերբ վորան նկութ ալրվում եւ աստիճանաբար կորցնում և իր  
քաշը: Արինակ՝ կշեռքի նժարը վրա դրեք վառած մոմը, հավասարա-  
կղուեցնք և քիչ հետո կնկատեք, վոր այն նժարը, վորի վրա  
մոմն և զրած, շարունակ բարձրանում և Յեթե շնչառությունը այ-  
րումն է, ուրիմ կննդանի մարդու քաշն ել հետզնետ պիտի պակասի:  
Փորձերը ցուց են տփել վոր կնկատես ալրվես և: Յեթե մարդուն  
նստացնենք մի զգաց լու կշեռքի վրա, շատ հեշտությամբ կարող ենք  
նկատել. թե ինչպես շատ զանգաղ, աննկատելի. բայց աստիճանաբար  
նրա քաշը պակասում է: Հաշվել են, վոր չափահաս մարդը մեկ ժամ-  
քա ընթացքում իր քաշից կորցնում է մոտավորապես ախքան, վոր-  
քան ստնարինի լրեաք մոմն ալրելիս:

Մենք վառարանը վառում ենք, վորպեսպի մեր սենյակը տաքաց-  
նենք: Այնպես ել շնչառության միջոցով մարդու մարմնի զանազան  
մասերում ալրվում և կատարվում և այբան ժամանակ արտադրվում և  
լերմություն: Առողջ մարդու մարմնը մշտապես մոտ +37° Ծ. Յերմու-  
թյուն ունի: Այդ մարդու մարմնի նորմալ բարեխառն եւ:

Մարմնի մեջ հետզնետ առաջացող շերմությունը մարդու որդո-

Նիզմի համար հսկալական նշանակություն ունի: Առանց այդ ջերմության մեր մարմինի բոլոր գործողությունները - մարսողությունը, միանաների շարժումները, ուղեղի աշխատանքները և այլն, կզաքարելին: Այդ տեսակ արից մարդու մարմինը կարող էնք համաժաման և մոքենալի հետ Սեքոնան և իր են բարեկան ստանում և յերմությունից: Հանգրելք շոքեկառքի հնոցը, և զնացքը կկանգնի: Յերբ զորաբարաններում քարածությունը համարում են, բոլոր գաղղահները զաղարում են, աշխատանքը կանգ և առնում: Ցիթե մարդու մարմինի մեջ և զաղարի ջերմության արտադրությունը, նրա անդամները կթուանան, մարմինի մեջ աշխատանքը կանգ կառնի և վերջիվերջո մարդը կմեռնի:

Այժմ մեզ համար հասկանալի յեղավ զնչառության կարենք դերը: Շնչառության հետեանքով մարմինի մեջ կատարվում են լանդաղ այրումն, նրանից առաջանում և ջերմություն, իսկ ջերմությունը մեր մարմնին հնարավորություն և տալիս աշխատելու:



Նկ. 57. Շնչառության գործարանի լույսանուր տեսքը

Ն.—Բնախացած երր. Բ.—Բերանը. Բի.—Կեանը. Գ.—Կոկորդը. Ը.—Խճառիկ. Տ.—Տրամեա. Ա.—Տրախայի ողակները. Բի.—Բրոնխները. Ը.—Մազանման բրոնխները. Ի.—Աջ թոքը և նրա յերեք բըլ թագները


## 2. Շնչառության որգանները

Մենք ողը ներշնչում ենք երով, Քթածակերով և երս մտող ողը նախ և առաջ անցնում և երային վորապեսույթ խոռոչի նեղիկ անցքերով և մի փոքր տարածում են Քթախորչի պատերը ծածկված են ներսից սոսնձանման լորձունքով: Աղի մեջ գտնված փոշին կպչում են նրա վրա, ինչպես ճանձները՝ կըպչուն թղթի վրա: Այդ տեսակեատից քիթը կարող էնք նուանցնել մի զործիքի, զոր ողը գտնվ և առօգնում են (բացարեցեք, թե վորքան մասակար և բերանով շնչելը):

Քթախորչից ողը մտնում է կրանը, այնտեղից կոկորդը և տեսափորը: Շնչափողը մի լայն խողովակ են, վոր տանում և զեղի թոքերը ջեռորդ շոշափեցեք ձեզ վիզը: Շնչափողի ներկայությունը հեշտությամբ կզաքար, Զեռքի տակ և բավականին կոշտ և ձկուն և յերեւմ, վորովհետև նրա պատերի մեջ կան կոճիկային կիսառղակածե մարմիններ, վորովհետև խողովակը ձգում և միշտ բաց են այդ կարողի մեջությունը:


Կոճիկները չլինելին, շնչափողը փափուկ կլիներ, ամենաթեթև հզու մից կարող եր սեղավել, և մարդը մշտապես խեղդվելու վտանգի առաջ կանգնած էլլիներ:

Շնչափողը ներքեից բաժանվում է յերկու նույնպիսի խողովակների, ապա ավելի բարձր, վորոնք կոչվում են՝ բրոնխները: Ինչպիս վոր ծառի արմատները ճյուղավորվում են ավելի բարակ արմատիկների, այնպիս ելքը բարձր ները ճյուղավորվում են ավելի:



Նկ. 58. Շնչառության ճանապարհների ըլլուման

Լ.—Կոկորդը. Ա.—Կոճուկորը. Տ.—Պահանձնի կոճիկը. Ր.—Աղակամձի կոճիկը. Բ.—Բրոնխները. Վ.—Փոքրը բրոնխները. Բըլ—Քթախորչիկները (լուստ մեծացրած):




Նկ. 59. Քթախորչ արախեատի (շնչափող)

Օօ—Երիկորը. Տ—Տրախատ. Բ—Կոճիկը. Ա—Լորձաթաղանթն իր թարթքավոր բջիջներով:

Քթախի խողովակների: Այդ խողովակներից ամենաբարակները վերջանում են փոքրիկ պարկուրով, իսկ այդ պարկերի պատերը կաղմած են ավելի փուր բշտիկներով, վարսնք կոչվում են՝ բրոնխներով: Այդ բաղմածիկ խողովակներն ու բշտիկները սիսուն կաղմում են այն լայնորդակ որգանը, վորին առում ենք բուն թոքարշակներն ալիքան փոքր են, վոր հասարակ աչքով նրանց տեսնել չենք կարող: Քթախի մեջ այդ բշտիկների թիվը հարյուրափոր միլիոնների յի հասնում: Ցիթե հնարավոր լիներ թոքերի բուն բշտիկները հանել, իբար մոտ շարել այնպես, վոր նրանց ներսի պատերը մի հարթ մակերես կազմելին, 200 քառ. մետր տարածություն կատացվել (հողի վրա չափացնեք և իմացնեք այդ տարածության մեծությունը):

Յուրաքանչյուր թոքը դրսի կողմից պատած են մի թաղանթով, վոր կոչվում են՝ պլիվը: Մարդը լերկու թոք ունի՝ աջ և ձախ, վորոնք զանգում են կրծքի խոռոչում և պաշտպանված են կողերի տակի թոքերին լավ ծանոթանալու համար, ավելի լավ կլինի վերցնել վորին կենդանությունը թոքուրը, վորոնք իրենց կառուցվածքով շատ նման են մարդու թոքերին: Վերցնեք վորի կամ հորթի թոքը: Յերբ շնչափողից փչում եք, նրանք ուռչում են սետինի փամփուշտի նման: Մի կար թոք լեթե պցեք ջրի մեջ, նա ջրի յերեսին կլողա (ինչնու): Յերբ

մենք ողով լցնում ենք մեր թոքերը, նա գնում, լցվում և թոքաբշտիկների մեջ. այստեղից դուրս գալու ո ըից ճանապարհ չկա, թոքապարկերը փակ են: Բայց մենք զիտինք, վոր մեր մարմնի բոլոր մասերի համար թթվածին և պետք: Մարդու մարմնի բոլոր մասերն ել հավասարաշափ տաք են: Հատեաբար թթվեցումը վոչ թե թոքերի մեջ



Նկ. 60. Թոքային բջտիկները՝ խիստ մեծացրած 1. Բջտիկը ըղջապատված է արյան մազա, ին անոթներով. 2. Բջտիկի հատածը: ԱԲ թոքային զարկերակի մի ճյուղ, վոր կեղտուա արյունը բերում և թոքերը: ՎԲ—մարդու արյունը վերադառնող յերակը

Հով թթվածին կլանել և հազենալով տանել, բաժանել ամրող մարձեին: Մարմնի մեջ գոյացած ածխաթթու զազը զարձյալ արյուն իր կետ բերում և թոքերը և նույն բջտիկների միջոկով դուրս հանում:

Այդպես ուրեմն, արյան շնորհիվ թոքերի մեջ զանված ողը շաքունակ փոփոխվում ե, մերթ աղքատանում թթվածնով, մերթ հարատանույ ածխաթթու զազով: Սրյունը թոքերի և մյուս մասերի համար միջնորդի դեռ և կատարում:

Մարդը ող շնչելիս լայնացնում ե կրծքի վանդակը և ներս ընդունում, իսկ արտաշնչելիս փշացած ողը դուրս վանում: Կրծքի վանդակի լայնանա ը կախված ե կողերի բարձրանալուց, վորի ընթացքում կրծքի և փորի խոռոչները բաժանող ստուծանին իջնում ե ցած (շնչելու ժամանակ ինքններդ ձեզ դիտեցեք, տեսնո, թե ինչպես ե կրծքի վանդակի ծավալը փոխվում, իսկ փորը շարժվում):

Թոքերի և կրծքի վանդակի պատերի արանքում ող չկա, արդ պատճառով թոքերի պատերն ամուր փակչում են կրծքի վանդակի պատերին (պատճառն ինչ ե հիշեցեք անկենդան բնության մասին անցածներից): Կրծքի վանդակի լայնանալու ժամանակ թոքերն ել նրանից չըաժանվելով—լայնանում են: Արտաշնման ժամանակ, ընդհակառակը, թոքերն իրենց առաձգական պատերի շնորհիվ սե մվում են և, փշած ռետինի պարկի ն ան, ողը դուրս մղում: Այդ ժամանակ վանդակն իջնում ե, ստոծանին զմբեթի նման բարձրանում ե դեղի կրծքի խոռոչը:

Յուրաքանչյուր ներշնչում և արտաշնչում միասին կազմում են մայառություն ոի շարժում:

Հասակափոր մարդը մի բովելում այդպիսի շնչառության շարժում կատարում ե 16—18 անգամ (կարող եք ձեզ վրա փորձել): Ամրող որվա ընթացքում հասակափոր մարդն էր թուերով անց և կացնում 10,0/0 լիտր ող: Ահա թե ինչո՞ւ, յերբ նեղ բնակարաններում շատ մարդիկ են ապրում, իսկուն շունչները կտրվում ե. վ. բովելեան թարմ ող չի լինում: Մեկ ժամում մարդը մեկ դուցյի ավելի ածխաթթու գազ ե արտաշնչում: դրա համար ել ողը շատ շուտով փշանում ե: Բացի այդ, մեծ քանակությամբ ջրային գուո չի լի արտաշնչում (ինչպես կապացուցենք): Այն սենյակները, վորտեղ մարդիկ սշտապես ապրում են և ախտառում, անհրաժեշտ և շարունակ ողափոխել լիթե փոշ, նրանք թէ դժվարությամբ կշնչեն և թե սենյակները կիսնավանան:

### 3. Շնչառության առողջապահությունը


ա. Փշացած ողը յեվ նրա վնասները. Մենք արդեն ծառնոթացանք ներշնչած և արտաշնչած ողի տարրերությանը. Սակայն, վորքան վոր դրսի ողի բաղադրությունն անփոփոխ ե, մեր բնակարանների ողը բոլորովին ալ ե: Ցեթե սիքանի հոգի փակ սենլո կում լերկար մնան, որաց շնչառության հետեանրով սենյակի ողի բաղադրությունն անմիջապես կփոխվի: Մենք զիտեք ք, վոր սիջին հասակի տեք մարդը մի ժամում շնչում ե 25 լիտր թթվածին և միւնույն ժամանակամիջոցում արտաշնչում ե 20 լիտր ածխաթթու Այստեղից կարող ենք յեզրակացնել, վոր փակ սենյակի թթվածի բանակը հետզհետե պակասում ե և ածխաթթու բանակն ավելանում: Նորմալ ողի մեջ 100-ին 21 սիսալը թթվածին ե, բայց նրա քանակը վոլքան պակասում ե, այնքան շնչառությունը դժվարանում ե. ալդ ժամանակ մարդ գանգատվում ե, թե զլուխը ցավում ե, կամ զլուխը պտույտ ե գալիք: Մենք փացած ենք համարում այն ողը, վորի 100-ից 1 ասն ածխաթթու գազ ե: Այստեղից պետք ե յեզրակացնել, վոր թատրոններում ժող փատեղերում և դասարաններում ածխաթթվի բանակը կարող ե ավելի բարձր լինել: Ցեթե նրա քանակը հասավ 100-ին 10 մասի, այլևս ալդ ողը շնչել անկարելի յե, նա թուն ե: Շատ հասկանալի յե, վոր այդ վտանգի ազատվելու միակ միջոցն ե դուռ և պատռնան բաց անել թարմ ող ներս ընդունելու համար:

բ. Շնչանեղանություն յեվ բունավորում. Ածխաթթուն մի իսկական թույն ե, վոր կարող ե կաթվածառար անել մեր սարսնի վորոց մասերը բայց թթվանի բացակառությունը ուահ կառաջանի ամրող որգանիզմի մեջ: վոր վհետե թթվածնից զրկված բջիջներն այլ ևս անկարող կլուսեն իրենց կենսական գործառնությունը կատարելու


ԱՅս թթվածնի պակասությունից առաջացած ալս մահը կոչվում է — ևնչահեղձաւրյաւն:

Իայց պատահում են գեղքեր, վոր դժվար ե ասել, թե մահը շնչահեղձությունից ե առաջացել, թե թունավորումից Արինակ՝ սենք զիտենք, վոր վառարաններից դուրս յեկած ածուխի սմսիդը թույն ե, վոր մեր արյան մոջ մանելով պրում ե մեղ թթվածնից և խեղիամանում: Այստեղ յերկու տնասեկի մահերը նույնանում են: Աւրեմն պետք ե վառարան վառելիս զգույշ լինեք, վոր ածխի ոքսիդ չգոյանա սենյակի մեջ:

Գ Ողափոխություն. Վերև հիշածներից պարզ ե, թե վրբանահրաժեշտ ե բնակարանի ողը նորոգելը նկարանների, զրասենյակների, դասարանների ողը շատ հեշտ ե մաքրել: Պատք ե բոլոր պատու-



Նկ. 61. Աղի մեջ գտնված վոշու հոտարկության մակարդատակի տակնայելիք:




Նկ. 62. Աղի մեջ լողացաղ ջրմուռներ և սուսկերը սպասներ ու ծաղկեփոքը:

հաճախ թթվածնից բաց անել, վոր ամեն կողմից նույնիսկ ուժից քամի վիճի և այլպես թողնել առնվազն 10—15 րոպե: Զարեւք ե վախճանությունը: Նախաղարձունքի համար և այն կարծիքը, թե պատուհանները բաց քնելը վկասուկար եւ Պատք ե միշտ պատուհանները բաց պահել բացի խոնավ հղանակներից Միայն պետք ե լավ ծածկել և այնպես անել վոր իերկու կողմից քամին ձեր վրայով չանցնը:

Դ Ողի փոքին յել նրա մեջ լողացող սերմերը. Աղի մեջ գոյություն ունեն մեծ քանակությամբ կենզանի սերմեր, վորոնք բարեաջող պայմանների մեջ ընկնելուն պես սկսում են զարդանալ 1860 թվականին ֆրանսիայի հայտնի դիտական Պասյորը փորձերով ապացուցեց նրանց գոյությունը և գտավ, վոր նրանցից շատերն անվաս են: Կան աւնպիսիները, վոր նույնիսկ ոգտակար են, բայց այնպիսիներն ել կան, վոր նոր օրգանիզմի մեջ ընկնելով առաջ են բերում մի քանի վառազավոր հիվանդություններ, — թոքախտ, դիֆտերիտ, ծաղիկ, քութեց, կարմրուկ և այլն: Այս հրվանդությունները բոլորն ել վարակիչ են, վարական պատճառը ողի փաշու մեջ լողացող ալ-


փոքրիկ մարմնիկներն են, վորոնք ընդհանուր անունով բակտերիաներ լիվ բացիլներ են կոչվում (նկ. 63): Այդ բակտերիաները մեր մարմնի մեջ մուտք են գործում շնչառության որդանների և բերանի միջոցով: ահա թե ինչու պետք ե զգուշանալ վոշի բարձրացնելուց, չպետք ե բերանը տանել մատիտ, գրիչ և առհասարակ այն պարագաները, վոր աշխատանքի ժամանակ ձեռք են անցնում: Սենյակը մաքրելիս պետք ե ջուր սրսկել կամ թաց շոր գործածել, վորպեսզի հատակի փոշին չբարձրանա:



Նկ. 63. Բութեղի բացիլները՝ մանրագիտակով նայելին:

#### Դ. Արտաքրուրյուն (յերկամներ)

Սենք արդեն գիտենք, վոր մեր մարմնի զանազան մասերում կերակրանյութերն այրվում են և նրանցից գոյանում և ածխաթթու զաղ: Այդ վնասակար զաղը թոքերի և մաշկի միջոցով արտաքսվում է:



Նկ. 64. Յերեկամները և միզափամփուշը, յուրաքանչյուր յերեկամ միզափամփուշը հետ հաղորդակցություն ունի մի միզափար խողովակով


#### Եից—մարդը կհիվանդանա:

Արևան միջից միզանլութը հեռացնելու համար կա առանձին որպան—յերկամները (նկ. 64):

Բայց, բացի այդ զաղից, մեր մարմնի մեջ գոյանում են և ուրիշ միամակար և անպետք նյութեր, վորոնք նույնապես պետք ե մաքրմից արտաքսվեն: Այդ նյութերից մեկը կոչվում ե միզանյութ: Միզանյութը պինդ մարմնին եւ ջրի մեջ հեշտ լուծվող, և ագալում ե մարմնի մեջ սպիտակուցալին նյութերի այլվելուց և կամաց կամաց հավաքվում ե արյան մեջ, Յեթե արյունը չմաքրվի միզանյու-

Յերիկամների միջոցով արտաթորվում ե միզանյութի և ուրիշ միջ քանի մասակար նյութերի լուծուլիթը, փորին առում ենք մեզ, թուքերի և յերիկամների աշխատանքները նման են. թե մեկը և թե մոտաց մեր մարդին ազատում են մասակար աղբերից:

Յերիկամներն արտաթքինով նման են յերկու խոշոր գորշագույն լորիների. Նրանք գտնվում են փորի խոռոչում, փողնաշարի աջ և ձախ կողմը, Յեթե յերիկամը յերկարությամբ կտրենք, նրա ներսում կտեսնենք մի փոքրիկ խորշ, վոր կոչվում ե յերիկամնակոնի. Արյունը յերիկամների մեջ մտնում ե առանձին զարկերակի միջոցով, վոր այնտեղ բաժանվում ե ամենաբարակ ճյուղավորությունների և վերջանում ե փոքրիկ կծիկներով. Այդ ճյուղավորությունների և կծիկների բարակ պատերով արյան մեջ գտնված անպետք նյութերը ջրի հետ միասին թորվում են և հավաքվում յերիկամնակոնքի մեջ. Յերիկամնակոնքից մեզը՝ մի բարակ խողովակի միջոցով, վոր կոչվում ե միզափառակ—գնում ե միզափառակամփուլսը մի ժամանակավոր ամբար ե՝ մեզը հավաքելու համար. Յեթե նրա մեջ լցվում ե բավականաչափ մեզ, մենք դուրս ենք թափում մի այլ խողովակով. Ամբողջ որփա ընթացքում մարդու արտաթորում ե մեկ ու կես կիլո մեզ. Մեզի բազալլիչ տարրերն են ջուր՝ 97%, միզանյութ՝ 2%, իսկ մնացած նյութերն անհամեմատ քիչ են:



Ֆ. 65. Յերիկամի ուղարկացաց հատածը գործադր յիշեռում են մըզանյութաբեր խողովակները, գորոնք մեզը թափում են յերիկամնակոնքի մեջ:

## 5. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ


1. Նյարդային համակարգի նօանակուրյունը—նյարդային համակարգի մեջ մտնում են ուղեղը և նրանից բաժանվող նյառդը. Նյարդալին համակարգը գործունեյությունը պարզ հասկանալու համար կատարենք հետեւյալ փորձը: Սպանած գորտի յիտեր թաթը կտրենք, աղզը մկանը հեռացնենք և գտնենք այն սպիտակ ու փայտան թելը, վոր գորտի վաղնաշարի մեջ տեղավորված վողնուկեղիք գլկել, մտել և թաթի մեջ. Այդ սպիտակ թելը գորտի նյառդն ե. Յաթե այդ նյարդն ունելիս կամքենք կամքենք:

Ֆենք՝ վրան—ամբողջ թաթը կցնցվի և կշարժվի, ինչպես կենդանի ժամանակը: Թաթի մկանները կոկեն կծկվել. Յեթե նյարդը զրդունք կը տրական հոսանքի միջոցով, այդ կծկումներն այնքան ուժեղ կիւնեն, վոր գորտի թաթը կոկոսի սեղանի վրա ցատկուել: Նշանակում ե Յյարդի գրգիւլ առաջ և բերում մկաններին: Այդ գրգիւլ նյարդի մը ջով անցնում ե, ինչպես եւկարական հոսանքը՝ պղնձի լարի միջով: Յեթե վորնե կենդանու ուղեղից դեպի վոտքի մկանները գնացող նյարդը կարենք, կենդանին իր վոտքը կառավարելու ընդունակությունից կորկիի և կոկոսի թուլացած վոտքը լիտելից քաշ տալ: Պատահում ե, վոր պատեբազմի մեջ գնդակը ծակում անցնում և զինվորի վոտքի կամ թեկի նյարդը: Վերը լավացնում են, բայց նյարդը մնում և կտրված. այդ ձեռքը կմնա անշարժ և փալասի նման կամ ընկած: Մարդու ըոլոր որդանները չարժվում են մկանների միջոցով, մկաններն սկսում են աշխատել նյարդերի դրդամը, իսկ նյարդերն իրենց զրգիւն ստանում են ուղեղից: Հետեւար ուղեղը մեր մարմնի այն գիշավոր որգանն ե, վոր մը ւս բոլոր որգաններին աշխատանի յե դիւմ: Բըլոր որգաններն ուղեղի հետ կապված են նյարդի միջոցով և կարծես թե նրա հրահանգներով են գործում:

Այն նյարդերը, վորնը ուղեղի հրահանգները հաղորդում են մկաններին, կոչվում են շարժողական նյարդեր:

Վորպեսպի ուղեղը կարողանա լսվ կառավարել մեր ամբողջ մարմնը, նա պետք ե գիտակցի, թե ինչ ե կատարվում մեր շուրջը և մարմնի մեջ: Միայն այդ պարագաներում նա կարողանա նետուն նամակացնեցնել մեր շարժումները լել մեր որգանների աշխատանի յե դիւմ: Բըլոր որգաններն ուղեղի հետ կապված են նյարդի մարմնի մասին: Ինչպես զիտենք, ուղեղը անշարժ և վուկը առուցի մասին: Ինչպես զիտենք, ուղեղը անշարժ և վուկը առուցի մասին: Այդ տեղեկություն ստանում մարմնի մեջ և մարմնից դուրս բոլոր կատարվածների մասին: Նա այդ տեղեկություններն ստանում ե հատուկ զգացողական նյարդերի միջոցով: Այդ նյարդերն ուղեղը կապում են աշխարհի, ականջների և բոլոր զգաւարանների հետ: Մաշկի աբրող ժակերեսից, մարմնի բոլոր մասերից արդպիսի նյարդալին թելեր և ն գնում դեպի ուղեղը ինչ յերկուէթ ել վոր կատարվի մեջ շրջապատող աշխարհում, ինչ աննշան փոփոխութեւն ել վոր կատարվի մեր մարմնի վորեւ մասում, զգացողական նյարդերն իսկուն տեղեւություն պատահուին:

Տեսթադրենք, թե մարդը լավ լիդանակին դուրս լեկավ ման գաղու և հանկարծ լիդանակն սկսեց զատանալ, ինչպես և ուղեղն իմասնում այդ բանը Տեսողական նյարդի միջոցով իմաց և տրփում ուղեղին, վոր լերկնքի վրա լիքեացին ամպեր, վոր շուրջն ամբողջովին մթնեց, վոր ամպերի մեջ փայլում և կալծակը. լողութիւն նյարդը լուր և տալիս ուղեղին, վոր վորոտ և լսվում, անձրևի կաթիւները թափվում են տերեների վրա. մաշկի մակերեսում յեղած շոշափելիքի նյարդերը հաղորդում են մաշկի լիքեսին կաթած անձրևի կաթիւների անտխորժ զգացումները, քամու փչելը և ալին: Ինչպես հեռախոսի զիլավոր կենտրոնում, այնպես ել ուղեղի մեջ ամեն կողից զալիս, հավաքվում են ամենաճիշտ տեղեկությունները: Ուղեղը, հավաքելով այդ տեղեկությունները, հասկանում և զիտակցում ե, թե ինչ ե պատահել և անմիջապես մի շարք զրգիւներ և հաղորդում մականներին՝ շարժողության նյարդերի միջոցով: Զեռքերի մականներն սկսում են շարժվել, մարդը կոճկում և կերպարկուն, բարձրացնում և ոճիքը, բաց և անում անձրեսը, վատների մականներն սկսում են ավելի արագ զործել և որ շարժումներ կատարել, մարդը տուն և վերադառնում արագ քայլերով: Մարմնի մլուս մկաններն ել զանազան հրամաններ են ստանում—վիզը կորանում և ցած, վորպեսզի քամին զիլարկը չտանի, արտեանունքները կկոցվում են, վորպեսզի քամու բարձրացրած փոշին չընկնի աչքերը և ալին:



Ալսպիսի որինակներ, վորքան ուղեքը կարելի յերեր: Մեր ամբողջ կանքի ընթացքում ուղեղն անդադար կառավարում է շարժողական և զգացողական նյարդերի միջոցով: Մեր ամբողջ կյանքը կաթված է նյարդային համակարգի կանոնավոր աշխատելուց:

Նկ. 66. Նյարդի աշխատանքները սխեման: C—նյարդային բջիջը, S—զգացողական թերթիկը, մոր մաշկից գնում և կենտրոնը, M—շարժողական թերթիկը, կենտրոնից գետի մականը:


2. Նյարդեր. Ինչպես իմացանք՝ կան զգացողական լիվ շարժողական նյարդեր: Զգացողական նյարդերի միջոցով (նկ. 66) մարմնի մակերեսից զրգիւը հաղորդվում և ուղեղին, իսկ շարժողական նյարդերի միջոցով՝ ուղեղից—մականներին: Սնացած բաներով, թե շարժողական և թե զգացողական նյարդերն իրար նման են, նրանք տարածվում են ամբողջ մարմնի մեջ և ճյուղավորված են բոլոր որգաններում: Յուրաքանչյուր նյարդ կազմված է բարակ նյարդային բերթիների խուրձերից, վորոնց կարելի յերադիտակով աեսներ: Յերբ նյարդը մտնում է վորեւ որգանի մեջ, բաժանվում է առանձին թելիկների և վորպես ճյուղավոր թիւր՝ մտնենում է բջիջներին:

3. Ուղեղը. Ուղենք յերկու ուղեղ—վազնուղեղ յեվ գանգուղեղ զողնուղեղն սպիտակ լարի նման եւ կաթեղավորված ե վողնաշարի խոզովակի մեջ: Նրա աջ և ձախ կողմից դուրս են գալիս զույգ-զույց նյարդեր: Յուրաքանչյուր նյարդ յերկու արմատ ունի առջևի և իւսանի: Ուղեղից դուրս գալուն պես յերկու արմատները միանալով՝ կազմում են մի նյարդ: Առջևի արմատից անցնում են շարժող թելերը, իսկ յետեկնից՝ զգացողական: Վողնուղեղից դուրս յեկող նյարդերի թիվը ընդամենը 31 զույգ ե:

Վողնուղեղը գանգուղեղի հետ միանում է ծոծրակի անցքով և կարծես նրա շարունակությունը լինի: Գանգուղեղն իր հրամանները տալիս է զիլարպագես վողնուղեղի միջոցով: Գանգուղեղի ծածկված և մի քանի շերտ թաղանթով և զրված և գանգի տուփի մեջ (նկ. 70): Այդ ապահով ծածկը նրան շատ անհրաժեշտ է, վորովհետև նա շատ փափուկ և չափազանց բարդ գոտուցվածք ունեցող մի որգան է: Շատ գիտնականներ են աշխատել սերնդեւ սերունդ, մինչեւ գանգուղեն:

Վոր իմացել են նրա կազմությունը և հասկացել նրա աշխատանքները:

Սպիտակ Յետեկի վերանյութը ակասը միզն:



Յետեկի արմատը


Գանգի լուսը

Առջևի արմատը

Առջևի ակասը  
Նկ. 68. Գողնուղեղի հորիզոնական հատածը

Գանգուղեղի զիլարպոր մասն և մեծ ուղեղը. գանգի մեջ նա ամենամեծ աեղն և բռնում և համարլա ծածկում ե միուս բոլոր մասերը: Մեծ ուղեղը մի խոր ակասով բաժանվում է յերկու կիսազների՝ աջ և ձախ: Մեծ ուղեղի յետեկում և նրա տակ գանգում ե փոքր ուղեղը: Գանգուղեղի այն մասը, վոր միանում է վողնուղեղին, կոչվում է յերակայնածիկ ուղեղ: Մեր ուղեղի յերեսը ծածկված ե ուռուցիկ ծալմերով: Վորքան կենդանին խելացի և զարգացած ե, ալնքան նրա մեծ ուղեղի կեսագները զարգացած են և հարսւատ բազմազան ծալքերով: Համե


ուղեղը հարթ է, շան ուղեղը ծալքավոր է, կտպկի ուղեղն ավելի շառ  
չակալքեր ունի, իսկ մարդունը—ամենից շատ: Մեծ նշանակություն ուն-




Նկ. 69. Նյարդային ընդհանուր  
համակարգ

նի նաև ուղեղի քաշը: Թուչուն-  
ների ուղեղը միջին հաշվով ի-  
բենց մարմնի՝  $\frac{1}{212}$ , իշխնը՝  $\frac{2}{254}$ ,  
կապիկինը՝  $\frac{1}{74}$ ՝  $\frac{1}{100}$ , իսկ մար-  
դունը՝  $\frac{1}{45}$  մասն և կազմում:  
Սպիտակ ցեղի տղամարդու ու-

ղեղը կշռում է միջին հաշվով 1350 գրամ: Նշանավոր մարդկանց ու-  
ղեղը կշռեմ և միջին հաշվով 1350 գրամ: Նշանավոր մարդկանց ու-



Նկ. 70. Մեծ ուղեղի կիսալնդերը  
ծալքերով և բազմաթիվ արյան  
մաղանոթներով:



Նկ. 71. Արմագատիկ նյարդային համա-  
կարդը և թոքաստամոքսային նյարդերը:

քանիսը զգացողական են—հոտառության, տեսողության, լսողության  
և այլն, իսկ մյուսները կամ շարժողության, կամ խառը, այսինքն մա-  
սամբ շարժողական և մասամբ զգացողական:


## 6. ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐ

Մենք արդեն իմացանք, վոր մեր ուղեղը շրջապատի մասին տե-  
ղեկություն ստանում ե զգացողական նյարդերի միջոցով, վորոնց թե-  
լերը տարածված են մարմնի բոլոր մասերը: Այդ զգացողական նյար-  
դերը միացած են առանձին գործիքների—զգայարանների հետ: Զգա-  
յարանները դիտում և տեսնում են ամեն ինչ, վոր կատար լում ե շուրջը  
և զգացողական նյարդերի միջոցով նյարդալին գրգիռնորը հաղորդում  
են ուղեղին:


Այդը տեսողության որգանն է, ականջը—լսողության, իիրը—հո-  
տության, լեզուն—ճաշակելիքի, իսկ մաելի արտաքին մակերեսը—  
ուսափելիքի:

1. Ա. Հ Ք Բ. Աչքն ամենակարեոր զգայարանն է: Աչքի կորուստն  
ամենամեծ դժբախտությունն է մարդու համար: Հիշեցնք, թե վորքան  
անողնական են կուլյերը: Միայն շոշափելիքն ե վորոշ չափով փոխա-  
րինում նրանց տեսողական կորստին: Աչքն ամենաուրբ և զգայուն  
որդանն է, ամենաչնչին բանով կարելի յե նրան վնասել: Շատ հասկա-  
նալի լի, վոր ալգակոի որգանը պետք ե առանձնապես լավ պաշտ-  
ողանված լինի: Ցեղ իսկապես, աչքը պաշտպանման շատ հարմարու-  
թյուններ ունի: Նա տեղակորպած ե վոսկրե խորը փոսի մեջ, վոր կոչ-  
վում ե աչքի որբիս: Աչքի այն մասը, վոր գեպի դուրս ե ցցված, պաշտ-  
ողանված ե վոսկրե չերեք բլրակներով՝ ճակատի, թշի և քթի վոսկր-  
ներով: Դեմքին վորեւ հարված հասնելիս շատ հաճախ այդ մասերին  
և դիպչում ե աչքը մնում ե տղատ: Փողուց, քամուց և չափազանց  
պարծառ լուսից և ալյն աչքը պաշտպանվում ե կոպերով ու թարթիչ-  
ներով, կոպերը վարագույնների նման իջնում են աչքի վրա, իսկ  
թարթիչները ծածկում են աչքը թանձը մազալին ցանցով: Ունքերն  
իրենց մազերով բոնում են ճակատի վրալից հոսող քրաինքի կամ ջրի  
հոսանքը և նրանց ուղղում են դեպի կողերը (փորձեցնք): Ցեթե ալո  
բոլոր պաշտպանության հակառակ, համենայն գեպս սի բան ընկնի  
աչքի մեջ, ալդ ժամանակ նրան ոգնության հն գալիս արցուեֆի զեղ-  
ձերը, վորոնք առատ արցունք են արտադրում, վորը վերջիվերջո աչքը  
լվանում ե և կեղտը հեռացնում: Սակայն ամեն ժամանակ արցունքը  
փոքր քանակությամբ հոսում ե աչքի վրայով, լվանում ե և նրան  
զարձնում պարզ ու փալլուն: Աչքի մեջ արցունքը չի հավաքվում,  
գրա համար կա մի արցունքատար խողովակ, վոր գնում ե քթի խո-  
սչը և ալնտեղ և թափում ավելորդ արցունքը: Այդ խողովակն սկսում

ե քթին մոտիկ՝ աչքի անկյունից մի փոքրիկ անցքով, վոր կարելի յե հայելու առաջ դիտել և տեսնել(փորձեցնք):




Նկ. 72. Աչքը դիմացից նայած:  
B—Սպիտակուցը  
I—Ծիածանը  
Pu—Բիբը  
L—Արցունքի գեղձը  
P—Արցունքի անցքը  
S,C—Արցունքի խողովակը  
N—Բիթը:



Նկ. 73. Աչքը խնձորը որբիտի մեջ:  
P—կողղը, Ci—աշտեանունք, S—ձարպագեղձերը, Co—շաղկապիչը, L—արցունքի գեղձը, O—որբիալ, No—աչքի նյարդը, G—ձարպաբարձը:

Աչքը խնձորի նման եւ Ալդ պատճառով նրան անվանում են աչքի խնձոր: Ալդ խնձորի առջևի մասում կա մի անցք, վոր կոչվում է բիբ: Սովորաբար մենք նրան տեսնում ենք վորպես մի սև բիծ, բայց իբրոք նա մի անցք եւ, իսկ նրա սև յերեւալու պատճառն այն ե, վոր



Նկ. 74. Աչքի խնձորի հատածը

H—թափանցիկ յեղջերաթաղանթը, R—ծիածանաթաղանթը, L—փոսպակը, D—ազակինման նյութը, Sn—տեսողության նյարդը, N—ցանցաթաղանթը, M—յեղջերաթաղանթը, P—սախախորշը, հեղուկով լիցուն, PP + դիտելի առարկան, B—առարկայի պատիերն աչքի մեջ տողած:

աչքի ներսի պատերը սև են և ներսը մութ: Յեթե փաղոցից նաևք գորևե տան ներքին հարկի պատուհանին, նա ել ձեզ մութ կերևա,

զօրովիետու այնտեղ ավելի մութ և քան փողոցը: Բրի դիմաց, լեռնի կողմից դրված և գոսպնյակը: Նրա ձգած պատկերը կընկնի աչքի լեռնի պատի վրա: Ալսպիսով ստացվում և առարկաների փոքրացրած լուսապատկերը, ինչպես լուսանկարչական դործիքի մեջ: Այդ պատկերացումը հաղորդվում է ուղեղին, իսկ արդեն մենք գիտենք, վոր ուղեղն աչքի հետ հաղորդակցություն ունի տեսողության զգացողական նյարդի միջոցով: Տեսողության նյարդը մտնում է աչքի մեջ և ճշուավորվում և աչքի մեջ և ճշուավորվում է աչքի ներսի պատերի հատուկ ցանցաղաղանթի մեջ: Լուսապատկերն ընկնում է նրա ամենազգայուն տեղը և գրգում է տեսողության նյարդի ծալրությունը նյարդը, այդ գրգիռը նյարդի միջոցով հաղորդվում է ուղեղին: Յեթե տեսողության նյարդը կտրենք՝ մարդը կկորցնի տեսնելու ընդունակությունը, թեկուզ աչքն ամբողջությամբ վողջ լինի: Հետևաբար մենք տեսնում ենք վոչ թե միայն աչքով, այլ և ուղեղով: Աչքն ախտեղ ծառայում է վորպես լույսի ճառագալթներն ընդունող և ուղեղին հաղորդող մի դործիք:


Լուսապատկերը պետք է ցանցաթաղանթի վրա ընկնի վորքան կարելի յե ճիշտ հաշվով և պարզ: Միայն այդ դեպքում աչքը լավ կտեսնի: Վորպեսզի պատկերը ցանցաթաղանթի վրա բավականին պարզ էրեւա և ինչպես պետքն է գրգուի տեսողության նյարդը, աչքի արկը մի շարք հարմարություններ պիտի ունենաւ:

Ամենից առաջ անհրաժեշտ ե, վոր աչքը բոլոր կողմերից լավ փակված լինի, վորպեսզի լույսը միմիայն բրի միջով ներս ընկնի: Այդ պատճառով աչքը պատած է թանձը և ամուր թաղանդներով: Ամենավերին թաղանթը, վոր դրսից պատում է աչքի խնձորը, կոչվում է յեղջերաղանթը, վորը շատ պինդ ե, նույնիսկ մկրատով դժվարությամբ կկտրվի: Նրա տակ գտնվում է անորարաղանթը, իսկ սրա տակ — ցանցաղանթը: Սպիտակաղուկն յեղջերաթաղանթը լավ պաշտպանում է աչքը զրսի կողմից: Նրա այն մասը, վոր ծածկում է բիբը, ժամացուցի ապակու նման թափանցիկ ե և նրա շնորհիվ բիբը պաշտպանված է ամեն տեսակ վտանգներից:

Բնության մեջ, մեր շուրջը յերեմն լույս և լինում, յերբեմն մութ: Վորպեսզի լուսապատկերը միշտ միտաեսակ պարզ յերեւա, անհրաժեշտ ե, վոր բրի անցքը յերբեմն միծ լինի և յերբեմն փոքր: Յեթե շրջապատի լույսը քիչ ե, բիբը պետք է լայն բացվի, վորպեսզի շատ լույս ընդունի, իսկ յեթե լույսը շատ պարծառ ե, պետք է սեղմի, վորպեսզի քիչ լույս ներս թողնի: Այդ պատճառով բրի շուրջն ողածե բռնել և ծիածանաթաղանթի շաբունակությունն եւ: Ալդ ծիածանաթաղանթը լայնանալով ու նեղանալով փոփոխում է բրի մեծությունը (գիտեցնք ձեր ընկերոջ աչքը և տեսեք, թե ինչպես լույսը նրա բիբը, յերբ դարձնում եք դեպի պատուհանը և ընդհանակը: Դիտեցնք կենդանիների աչքի բիբի ձերը, Որինակ, կատվի

աչքի թիթը ի՞նչ ձեւ ունի ցերեկը և ինչ ձեւ գիշերը). Աչքի գույնը կախված է ծիածանաթաղանթի գույնից (ի՞նչ գույնի աչքեր եք տեսածն).

Աչքի պատերը փափուկ են, չնայելով վոր շոշափելիս աչքի խընդորը մեզ յերեսում եւ բավականին կոշտ և նրա թաղանթները լերբեք



Նկ. 75. Աչքը չարժող մկանները

DE—գրսի ուղի մկանը. Df—ներսի ուղի մկանը. Ds—վերևի մկանը. Dif—ներքեւի մկանը. Co—մեծ չեղ մկանը. Or—փոքր չեղ մկանը. Or—որբիտը. P—կապը. O—արտևանունքը. No—անորոշության չարջը. Er—վերին կողը չարժող մկանը.

Չի կարելի միաժամանակ թե հեռուն լավ տեսնել և թե մոտիկը Մատիտը բռնեցնք ձեր գլխի առաջ և նրա վրայով նայեցնք դիմացի պատին կամ մի վորեւ հնուու առարկալի: Պատը դուք լավ կտիսնեք, իսկ մատիտը խավար, կարծես, մշուշի մեջ լինի: Իսկ ընդհակառակը, իթե մատիտին մոտիկից նուիք, պատը խավար կերեա: Կենտրոնացրեք ձեր աչքը լերբեմն պատի վրա, լերբեմն մատիտի, հավանորեն դուք կզգաք, վոր պետք եւ առանձին ուժ գործ դնեք ձեր աչքը հեռավորությանը հարմարեցնելու համար: Վորպեսի աչքը հարմարեցնք հեռու տարածությանը, պետք եւ վոսպնակն ավելի տափակ ձեւ ստանա, յեթե վոչ՝ ցանցաթաղանթի վրա պատկերը զարդ չերեա: Իսկ մոտիկը տարածությունը լավ տեսնելու համար պետք եւ վոսպնյակն ուռուցիկ լինի: Վոսպնյակի ձեր փոփոխելու համար շուրջը ողանման մի մկան կա, վոր կոչվում եւ բարիչական մկան: Թարթիչական մկանի կծկվելու ժամանակ վոսպնյակի կորնթարթությունը փոխվում է: Ալդ գործիքի շնորհիվ մեր աչքը հարմարվում եւ տարածությանը: Հեռուն նայենք, թե մոտիկ՝ ցանցաթաղանթի վրա պատկերը միշտ պարզ կերեա:

2. Աչքի թերությունները. — Այն աչքը, վոր մենք նկարագրեցինք, նորմալ աչքն եւ Բայց շատ հաճախ պատահում եւ, վոր աչքն ունենում եւ վորոյ թերություններ, վորոնց պատճառով տևողությունն ել անկանոն և լինում:

Աչքի զլխավոր թերությունները հետեյալներն են. կարնահարություն, ներատեսություն, ծերատեսություն, ուրիշություն, անհամակենտրոնացում, դաշտություն կամ զունախություն:

Կարնահարություն. (Նկ. 76): Կարճատեսությունն աչքի ձեի անկանությունց և առաջ զալիս: Նորմալ աչքի խնձորը համարյագնդան եւ, իսկ կարճատես աչքի գունդը հորիզոնական եւ. կամ առաջնեց գեղակի լետուի տրամադրին ավելի լերկար եւ, քան վերկից—ներքեւ: Ալստեղից յեղրակացնում ենք, վոր հեռավոր առարկաների պատկերը վոչ թե ցանցաթաղանթի վրա, այլ առաջ և ընկնում, այսինքն ձիշտ այն տեղը, ուր նորմալ յեղած գեղագում պիտի ընկներ: Կարճատեսության պակասն ուղղելու համար գործ են ածում յերկգոզավորագակիներով ակնոցներ, այսինքն, վորոնց մեջտեղն ավելի բարակ եւ, քան լեզրերը: Ալդպիսի ապակիներն ավելի հեռու յեն մղում լույսի ճառագայթները և ձգում են ուղիղ ցանցաթաղանթի վրա:


Հեռատեսություն. (Նկ. 76): Հեռատեսությունը հակապատկերն եւ կարճատեսության: Հեռատես աչքի խնձորի հորիզոնական տրամադրին ավելի կարճ եւ, քան ուղղահայացը: Աչքի խնձորը վերկից—ներքեւ թերթե կերպով տափակած եւ: Ալստեղից կարող ենք յեղրակացներ, վոր լուսապատկերն ընկնում եւ ցանցաթաղանթից հեռու: Ալս պակասությանն ել ոդնության կարող են գալ յերկուուցիկ ակնոցները, վորոնց ապակիների մեջտեղն ավելի հաստ եւ քան լեզրերը: Սրանք լուկսի ճառագայթները մոտեցնելով հանդիպեցնում են ցանցաթաղանթին:

Ծերատեսություն. Ծերատեսությունն աչքի խնձորի վորեւ թերությունից չի առաջանում, այլ արտելանունային մկանի թուլանալուց վորի պատճառով աչքի վոսպնյակը զրկվում եւ լուսին հարմարվելու ընդունակությունից: Փոքր տարածության վրա աչքը չի հարմարվում տարրկան տեսնելու համար և մարդ ստիպված եւ առարկան ծօ- ման: Հեռացնել վորպեսի նրա լուսապատկերն ընկնի ցանցաթաղանթի վրա: Ծերատեսությունը տարիքի հետ հետզհետե զարգանում է: Ծեր մարդիկ մեծ մասամբ յենթակա յեն այս հիվանդությանը, վորի առաջը կարելի լեւ առնել նույնպես յերկուուցիկ ակնոցներով:

Անհամակենտրոնացում. Նույնպես աչքի թերություն եւ: Պատահում եւ, վոր վոսպնյակը կամ թափանցիկ յեղիներաթաղանթը կանոնավոր կորություն չեն ունենում, լուսի ճառագայթները նրանց միջով անցնելիս խոտորվում են և աննորմալ արտացոլումներ տալիս: Ալսպիսի գեղագում լուսապատկերը ծովում եւ, կամ բոլոր մասերում միւսույն

պարզությունը չի ունենում: Այս պակասությունն ավելի հաճախ և առջի ունենում և զբա հետեւանքը կարող է լինել կարճատեսություն կամ հեռատեսություն: Սրա դեմ գործածում են գլանաձև ապակիներ:

Դալտոնիզմ. Դալտոնիզմ կամ գունախտ, իր անունն ատացել և անդլիացի նշանափոր քիմիկոս Դալտոնի անունից, վոր այս հիվանդությունն ունեցել և Կատարագությունն անդունակ անդամքով նկարագրել: Դալտոնական հիվանդությունն ունեցողն անընդունակ և վորոշ գույներ զանազանելու: որինակ՝ կարմիր, կանաչ կամ ավելի հաճախ, ինչ վոր կարմիր և նրան կանաչ և յերեւում, որինակ՝ կեռասը տերեներից միայն ձևով և տարբերում: Շատ հասկանալի լին, վոր այդպիսի հիվանդություն ունեցողները վորոշ պաշտոնների համար անվետը են, որինակ՝ լերկաթուղու կամ ծովագնացության մեջ, վորտեղ գունավոր աղդամանշեր են գործածում:



Նկ. 76. I. կանոնափոր աչք. III. կարճատես աչք. պատկերը ցանցաթաղանթի առջևն և ընկնում: II. հեռատես աչք. պատկերը ցանցաթաղանթի յետն և ընկնում:

Ելույթուն, Ելությունը նույնագես աչքի խնձորի պակասություն չե, այլ շարժող մկանների անհավասարության: Յեթե աչքի գունզը շարժող մկաններից մեկը կարճ ե, աչքը ծովում և դեպի այդ կողմը, այնպիսի վոր յերկու աչքերի թեսողության առանցքներն այլիս զուգահեռական չեն լինի: Ելությունը կամ կարճ մկանի թերեւ կործանվել է գործածում են գործածության միջոցով:

3. Աչքի տոռողապահական կանոններ. 1) Ցուրտը տաքը, քամին և փոշին հաճախ զրդություն և ունենում աչքի կոպերի կամ ուղղակի աչքի գնդի վրա. աղպինի զեպքերում ամենից լավ և աչքը լվանալ լիփած գոր ջրով և չտրորեր:

2) Առատ լույս աեղում աչքդ մի բանա: Արևին նալելուց զգուշացիր—կառանաս:

3) Շատ մութ տեղում յերկար մնալուց նույնպես զգուշացիր:

4) Մանր տառերով զրելը և կարդալը կարող են առաջացնել կարճատեսություն, մանավանդ, յերբ այդ աշխատանքն անում եռ նվազ լույսի տակ, կամ յերբ սովորություն ունես կարդալու կամ զրելու ժամանակ շատ մոտիկ կուանալու (Նկ. 77):

5) Աչքդ չոգնեցնելու համար միշտ գրքեց կամ թղթից 30—40 սնտ, հեռու պահիր (Նկ. 78):

6) Յերեկվա լույսը քիչ հոգնեցնող ե, բայց յեթե ստիպված են արհեստական լույսի տակ աշխատել, ամենալավը դեղին լույսն ե, այսինքն նավթի կամ այլ լույսերից ստացած լույսը, միաւն այն պահմանով, վոր ծուխ չանի:

7) Ակնոցներ չգործածես առանց բժշկի խորհրդի:

4. Ականջը. Ականջը լսողության որգանն ե և մեղ համար նույնքան կարենը նշանակություն ունի, վորքան տեսողությունը հսողության շնորհիվ իրար խոսակցություն հասկանում ենք, լսում ենք բնության մեջ լցված բոլոր ձախներն ու հնչյունները: Ականջը նույնպես շատ նուռը որգան ե, այդ պատճառով շատ լավ պաշտպանված ե ամեն տեսակի վտանգներից և խորը աեղավորված ե քունքի վոսկրի փոսի մեջ:

Վորայնեղի հասկանալի լինի, թե մենք ինչպես ենք լսում, մի այսպիսի փորձ անենք: Վերցնենք մի մեծ ձադար, վորի լայն ըերանին ամրացնենք կառւչուկի բարակ թաղանթ, այդ թաղանթի մեջտեղին ամրացնենք մի փոքրիկ կլոր հայելի: Զագարը սեղանի վրա ամրացնենք այնպիս, վոր հայելու վրա ընկնի լույսի պայծառ ճառագյթը և այնաեղից արտացոլի պատի կամ առաստաղի վրա: Բավական ե ձադարի մոտ մի թեթև ձախն հանենք, որինակ, մի վորեն նոտա կամ յերաժշտական գործիքի միջոցով մի հնչյուն, և արդեն պատի վրա լույսի շողքը կոկսի թրթռալ: Ինչնու յե թրթռում: Վորովհնետե հայելին զողղողում ե: Ինչնու յե հայելին զողղողում: Յերկի նրա համար, վոր թաղանթներ զողղողում: Այստեղից յեղբակացնում ենք, վոր բարակ թաղանթներն ընդունակ են ձախնից թրթռալու (զուք ել նկատած կլինեք, թե ինչպես լուսամուտի ապակիները դողում են ուժեղ ձախներից: Ուրիշ որինակներ ինքներդ բերեք):

Ականջի կազմությունը հասկանալու համար այս որինակն անհրաժեշտ եր, վորովհնետե մեր ականջն ել նման բարակ թաղանթ ունի,

Վրակը ողուկի վրա ծգված, ինչպիս թմբուկի մաշկը և կոչվում է թմբարպանք, վոր նույնպիս դողողում և զանազան ձայներից:

Թմբկաթաղանթը գտնվում է յերկար ականջափաղի դիմաց Ականջափողն սկսվում է ականջի զրսի անցքից և զնում է բավական

խորը. Այդ անցքի շուրջը գտնվում է ականջակոնիլի, վոր ծառալում և ձայներ հավաքելու և ականջափողի մեջ անցկացնելու համար (լինչ ուղղություն ունեն ծանր լող մարդիկ, իբր ուղույն մեկին լսել), Ականջափողն ուղղակի չի մտնում ներս, ալլ մի փոքրիկ պտույտ է տալիս, յեթե վոչ՝ շատ հեշտությամբ մի լիրկար ձողով կարելի կլիներ մինչև թմբկաթաղանթը հասնել և փչացնել. Ականջափողի պատերն արտադրում են մի թանձր ճարպանման նյութ՝ ականջածնումք: Վերջինս քսվելով թմբկաթաղանթին, նրան փափկացնում և և առաջական դարձնում (նկ. 79):

Ինչպիս վոր աչքի ոգնո թյամբ ուղեղը տեսնո մե, ճիշտ այնպիս ել մարզ ուղեղով լսում է ականջի ոգնությամբ: Համականակի լին, վոր թմբկաթաղանթի տատանումները պետք ե այս կամ այն կերպ զրդուն լսողության նյարդը, իսկ այդ զրդիու նյարդի միջոցով հաղորդվում է ուղեղին: Տեսնենք, թե ինչ ճանապարհով թմբկաթաղանթի թրթռումները ներգործում են լսողության նյարդի ծայրերի վրա: Այդ ճանապարհը բավական յերկար և ուժարդ, վրույնու թմբկաթաղանթի և լսողության նյարդի արանքն ընկած են մի շարք լրացոցի դործիքներ: Յերբ մի վորեն ճանապարհում և մուտք, յերկը ուրդը՝ սախ, իսկ յերեսը՝ ասպանդակ: Նախ և առաջ շորջում ե մուրճ, մուրճը շարժում և սալին, սալը՝ ասպանդակին: Վերջինս իսկապես իր ձեռք շատ նման և ասպանդակի: Նա իր լայն մասով մտնում է ձվածել պատմանի մեջ: Զգածե պատուանն այն անցքն է, վոր տանում և զեպի վոսկրե տուփը, վոր իր բարդ կառուցվածքի պատճառով կոչվում է լաբիրինտուս: Լաբիրինտուսը լցված է հեղուկ նողության նյարդը մտնում է լաբիրինտուսի մեջ, ճանապարհում ե և իր ծալրերը թաղում ալիսել լցված հեղուկի մեջ: Զգածե պատճառնը նույնպիս ծածկած է բարակ թաղանթով: Հենց այդ թաղանթին և դիպչում ասպանդակը և նրան ցնցում է հասկանալի յն, վոր տապանդակի ամեն մի ցնցումը



Նկ. 77. Կարճառառության հակումնության հակումնության




Նկ. 78. Նորմալ ընթերցանություն (30—40 սնտ. հոռուց)

պետք ե տատանի լաբիրինթուսի հեղուկը, իսկ հեղուկի տատանումնեւ ընց գրգովեն նրա մեջ խորասուղված նյարդերի ծայրերը: Այսպիս ուղեթն լսողության վասկրների և լաբիրինթուսի հեղուկի շղթան այն փոխանցող կայաններն են, վորոնց սիջոցով թմբկաթաղանթի զողողալը հաղուրդվում է լսողության նյարդին:

մ. Մուրճ

ս. Սալ

ա. Ասպանդակ



Նկ. 79. Ականջն իր մասերով

Ականջը նկարագրելիս, սովորաբար բաժանում ենք յերեք մասի: Սինչե թմբկաթաղանթը կոչվում է արտաքին ականջ, այն մասը, վորտեղ գտնվում են լսողության փոքրիկ վոսկրները՝ միջին ականջ, իսկ լաբիրինթուսն իր բարդ խողովակներով ու կամբաճներով՝ ներքին ականջ: Զարմանալին այն է, վոր միջին ականջի խորշը հարաբերություն ունի արտաքին ողի հետ: Միջին ականջից զեպի կլանն և զնում մի յերկար ու բավականին բարակ խողովակ, վոր կոչվում է յեվսախյան խողովակ: Սյա խողովակի նշանակությունն այն է, վոր թմբկաթաղանթի յերկու կողմից ել ստացվում ե ողի միատեսակ ճնշում, յեթե վոչ՝ թմբկաթաղանթը չեր կարող բավականին ազատ թրթառ: Ողի սաստիկ ցնցումներից, որինակ՝ պալիթյունների կամ հրաձգության ժամանակ, միջին ականջի արտաքին ողի հետ հարաբերություն ունենալը պաշտպանում է թմբկաթաղանթը պատճենություն: Նա յերկու կողմից հարված ստանալով, մեռմ և անֆաս, ինչպիս յեթե մի բարակ թերթ թղթին հարվածենք միաժամանակ թե աջից և թե ձախից, չի պատռվի:


Լսողության առողջապահությունը:

1. Ամեն առավատ պետք ե լվանալ ականջակոնքն ու ականջափողը փափուկ շորով: Լավ կլինի, վոր ժամանակ առ ժամանակ աշխիք:

Խորը լվացում կատարեք, վորովհետև դեղնագույն ճարպալին նյութը փոշու և այլ կեղտերի հետ հավաքվելով թմբկաթաղանթի մոտ, կարող ե ժամանակավոր խլություն առաջ բերել:

2. Գետք և ականջը զգույշ պահել անսպասելի ուժեղ ձայներից, վորոնք կարող են թմբկաթաղանթն ուժեղ ցնցել կամ զուցեալ պատռել: Արդարի դեպքերում պետք ե բերանը բանալ: Դուք արդեն իմացաք, վոր միջին ականջը բերանի հետ հաղորդակցություն ունի յեկտախան խողովակի միջոցով: Եթեք ձայնի ալիքները միաժամանակ յերկու կողմից են հարվածում թմբկաթաղանթին, թրթոռմները բավականին թուլանում են:

4. Շատ անգամ հանաքով ձեր ընկերոջ ականջին պինդ բղավում եք նրան վախեցնելու համար: Վերև հիշածներիս հիման վրա այդ խաղը չպիտի անեք:



Նկ. 80. Քթի հատածը. CS—վերին ծալքը. CM—միջին ծալքը. CI—ստորին ծալքը: Այս յերեք ծալքերը պատող թաղանթը լորձաթաղանթն է (թվանքի):


Հոտոտելիքի նյարդը գտնվում է գանգուղեղի առջևի մասում մազանման վոսկրի զիմաց, վորի ծակոտիներով անցնում են նրա ճկուղավորությունները և տարածվում լորձաթաղանթի մեջ և նրա ծալքերը թելիկների նման ցցվում են լորձաթաղանթից դուրս:

Խլինքի թաղանթն իր մեջ պարունակում է մեծ քանակությամբ վողկուլզանման գեղձեր, վորոնք արտադրում են խլինքի կոչված թանձրնեղուկ, վոր լորձաթաղանթի յերեսը միշտ թաց և պահում:


Խնչակն ենք հոտ զգում. Հոտավեա նյութերի չափաղանց նուրբ մասնիկները գաղային դրությամբ լողում են ոդի մեջ: Մեր ներշնչած սպիրի հետ միասին մտնում են քթի մեջ և կազում լորձաթաղանթի վրա:

և խլինքի մեջ լուծվում: Հոտառության նյարդի թելանման զգայուն ծալքերը նրանց ներկալությունից զրգովում են և այդ զրգիւը հազորդում ուղեղին, իսկ այնուեղ ալդ զրգիւը փոխվում և հոտառության զգայութիւն:

Հոտօտելիքի առողջապես լուծեալ քիթը մի քանի հիվանդություններ ունի, վորոնցից ամենատարածվածը հարբութին է: Այս հիվանդությունը վայրկեանապես բթացնում և հոտառության զգայնությունը: Նա առաջանում է զանազան միկրոբների ներկալությունից, վորոնցից ազատվելու միջոցն է քիթը զորութեալ բորակալին ջրով կամ բղակի յերկու աված գաղջ ջրով:



Նկ. 81. Քթանցքի հատածը. 2—3 հոտառության բլթակը. 17, 17 արնատարանութները. 9—նոտառության նյարդերը. 9—8—արնատարանութներ. 6—7, 10, 15, 12, 17—դեպի վերին ատամները դնացով արնատարանութներ և նյարդեր:



Նկ. 82. Լորձաթաղանթի կառուցվածքը. N—հոտառության նյարդի ճյուղավորությունը. Mр—լորձաթաղանթը. F—սյարդի ծայրը բջիջների արանքությունը: G—լորձունքի գեղձը:

Ծխախոտի ծուխը նույնություն գտն ազգեցություն և անուն հոտառության զգայնության վրա: Այդ պատճառով պետք ե զգուշանաբ ծխելիս ծուխը քթից հանելու վատ սովորությունից: Ի հարկն, ավելի լավ կլինի բուրուսին չծխել, վորովինետև ծխախոտի մեջ կա նիկութին կոչված թուլնը, վոր հիշողության վրա յել և վատ ազդում:

6. Լեզու. Մենք, լեզվին արդեն ծանոթ ենք, բայց այս անգամ նրան ուսումնասիրում ենք իրեն նաև կերպի ուղարկությունների ուղարկությունները կերակուրների համան զգալին են:

Լեզուն ամբողջապես պատած է լորձաթաղանթով: Նրա վերին մակերեսը և զիմավորապես յեղբերը ծածկված են բազմաթիվ մանր պտուխներով: Այդ պտուխները յերեք տեսակ են՝ 1. թելաձե, 2. ոնկաձե և 3. բաժակաձե:

Թելաձեվ պտուխները շատ բազմաթիվ են և տարածված են յեղիք ամբողջ վերին յերեսի վրա: Նրանց ծայրերը բարակ ու նուրբ թելերի նման պատահ ցցված են: Սնկաձել պտուխների կան յեղիքի յերեսին, բայց նրանք ավելի առատ են յեղիքի սուր ծալքին և յեղբերին: Բաժակաձեն

պաւկներ՝ շատ խոշոր են և սակավաթիվ։ Նրանք աեղավարված են լեզվի տակը, հիմքին մտտիկ։ Ընդամենը տառներկու հատ են և դասավորված են Վ գերբով։ ամենամիջը գտնվում է անկյունի ծալրում։ Բաժակաձև պտուկները կոնի կամ գ.անի ձև ո.նեն, վորոնք դրված են մի բաժակի մեջ այդտեղից ել ստացել են իրենց անոնց։ Նրանք սովորական աշխարհում տեսնելի լեն, վերեկց նայելիս կենտրոնում լիրում եղուր ցցված ու բլուր, իսկ նրա շուրջը՝ լիշտանածե փոս։

Նկ. 83. Լեզվի սքեմատիկ նկարը կող և գլուխութեալի վրա լիրում են պտուկները և նրաց մեջ տարածվող նայաբայի թերթերը

Լեզվի մեջ յերեք գլխավոր նյարդեր են մտնում, մեկը լեզվի, մյուսը՝ կլանա-կոկորդի և լերտորդը՝ ստորեզվա, Առաջին լիրկուսը



Նկ. 84. Պտուկների սքեմատիկ նկարը։  
Ա—թելունման, Բ—սնկածե, Յ—բաժակաձև պտուկը  
ուղղահայաց հատած։

տարածվում են ծալրում և բաժակաձև պտուկների մեջ, իսկ լիբրորդը՝ վեզվի մկանների մեջ, նրա շարժումները զեկավարելու համար։

Թե ինչպես ենք նամ զգում, այդ ախնքան ել դժվար չի հասկանալ։ Թքի մեջ լուծված առի, շաքարի կամ ալլ նյութերի մասնիկները գնում և դիպչում են պտուկների մեջ տարածված նյարդերի ծալրերին, վորոնք գրգռվելով՝ տպավորությունը հազորդում են ուղեղին, իսկ այստեղ ստանում ենք նաօակի կամ նամի զգայությունը։

Ճառակելիքի առօդ ապահով բյունը. Ճառակելիքը կոռող և բթանալ դառն և գրգռիչ համեմունքներ չափաղանց գործածելուց, ալկոհոլից և ծիամբուրցից։

### III. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԶՐՈՒՄ, ՈԴՈՒՄ ՅԵՎ ՑԱՍԱԳՈՒՄ

#### 1. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԶՐՈՒՄ

ա. Կես.

Առևտուարակ կենդանիների կյանքը և մարմնի կառուցվածքը միշտ լարմարվում է այն սիջավալրին. վորոտղ նրանք ապրում են։

Որինակ՝ վերցնենք մի կաթնասուն, վորի մարմինն ամբողջովին նարմարվել և ջրալին կյանքին՝ այդ կենդանին կոչվում է կես։ Նրա մարմինը շատ նման է ձկան, այդ պատճառով շատ հաճախ նրան անվանում են ձկնանասան կաթնասուն։ Նրա մաշկը բոլորովին մերկ է, վերջավորություններից առջևինները, այսինքն թևերը ձևափոխվել են լողակների կամ թիերի, իսկ վոտքիր բոլորովին չունի, կամ ավելի ելիշտը՝ նրանք վոչնչացել են։ Եկր կետի մարմքն անդամաստում են, վոտքերի հետքերը գտնում են այնտեղ։

Կետերն ապրում են Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների հրոսակալին մասերում։

Կետն ամենամեծ կաթնասունն է աշխարհիս լերեսին։ Նրա մարմինը լերկարությունը 20-30 մետր է, իսկ ծանրությունը՝ 100 տոննից ավելի։ Գլուխը շատ մեծ է, համարյա մարմնի մի լիբրորդ մասն է կազմում, իսկ աչքերը չափազանց փոքր են։ Մաշկի տակ կա ճարպի մի հաստ շերտ, վոր նրան պաշտպանում է ծոփի սառը ջրում մրսելուց և հեշտացնում է ջրի մեջ լողալը։ Չե վոր ճարպը ջրից թեթև է։

Նրա մարմինը վերջանում է լերկելթակ պոշով, վոր զեկի զեր և կատարում։ Լողալիս նրա ոչնությամբ այս ու այն կողմ է շարժվութեալ բաժիններին արագ և լողում, մեկ ժամում անցնում է մոտ 30 կիլոմետր։

Կետի գանգը նույնպես առանձնահատուկ ձև ունի։ Ծնողները չափազանց լերկար են, վերին ծնոտի և ստորին ծնոտի միջև ընկած տարածությունը 9-10 մետր կլինի։ Ատամիներ բոլորովին չունի, բաւց վերին ծնոտից զեպի ցած կախված են յեղջերատին բիբեղներ, վորոնց թիվը մոտավորապես 400 էլինի։ Թիթեղներից լուրաքանչյուրը ներսի կողմից բաժանված է բարձր թուրիկիների։ Կետը կերակրվում է միայն վոքքը կենդանիներով, խիստնշներով, խեցգետնանմաններով, մեղու-

հաներով և փոքրիկ ձկներով։ Նրա կոկորդը շատ նեղ եւ չոկա բերտելը բաց անելիս ներս եւ քաշում մեծ քանակությամբ մասնը կենդանիներ, հետո բերանը փակում եւ, հաստ լիզուն բարձրացնում եւ գեղի վերև ու թիթեղների արանքով ջուրը մաղում եւ պուրս, իսկ կենդանիներին մեկ-մեկ կուլ եւ տալիս։



Նկ. 85. Կե-

Կետը շնչում եւ թոքերով։ Յուրաքանչյուր 10—15 բոլին մեկ անգամ նու բարձրանաւմ և ջրի լերեսը, աճափին ազմուկով քթածակեր բոր արտաշնչում եւ վշացած ողը ջրային զորշիների հետ միասին, զորը հյուսիսային սառը մթնոլորտի մեջ խոտանալով՝ մի հոկա սլուն և կազմում, և թարմ ող ներշնչում։ Իսկ լեթե նրա շնչանցքը ջրի տակ և լինում, արտաշնչած ողի հետ միասին չատրվանի նման ջրի լերկար սլուն և արձակում գեղի վերև։

Կետի թոքերը շատ ընդարձակ են և իրանց մեջ ողի մեծ պաշար են հազարում, այդ հանգամանքը նրան հնարավորություն և տալիս բավականին լերկար ընդմիջումներով շնչելու ջրի տակ քթածակերը ժակվելու հարմարություններ ունեն։

Կետն իր ձագերն կերակրում եւ կաթով։

Կետերին վորառում են նրանց ճարպի և լեղջերյա թիթեղիկների համար։

### Բ. Փոկ

Ահա մի ուրիշ կաթնասուն և մոակեր կենդանի, վորի մարմինն ավելի մեծ հարմարումներ ունի ջրի մեջ ապրելու համար։ Նրա մար-

մինը բոլորովին նման եւ ձկան և լիրկածն և, վոր նրան մեծ հարմարություն եւ տալիս ջրի մեջ լողալու։

Վերջավորությունները սաստիկ կարճ են, մատները՝ հարթ ու լայն թաղանթներով սիացած, վօրոնք գործ են ածվում վորպես թիթ։ Ցետերի վերջավորությունները ծառայում են նրան վորպես պեկ։

Փոկի մաշկի տակ նույնպես գտնվում եւ ճարպի մի հաստ շերտ, վոր մի կողմից նրան թեթևացնում եւ, իսկ մյուս կողմից պաշտպանում եւ ցրտից։


Փոկի մարմինը կետի նման մերկ չէ, այլ ծածկված եւ լերկար ու կոշտ մաղերով, իսկ նրանց տակ՝ ավելի կարճ և փափուկ աղվամաղավ։ Դլիքի վրա փայլում են յերկու խոշոր աչքերն իրանց թարթիչներով։ Շրթունքների շուրջը ծածկված եւ լերկար խոզաններով։

Փոկը լրիվ ատամնաշար ունի։ Կորիչները փոքր են, ժանիքները իրաս զարգացած, սեղանատամները՝ միորինակ։ Չնայելով զրան՝ նրանք վորսը սովորաբար վողջ-վողջ են կուլ տալիս։

Փոկերը հետաքրքիր կենդանիներ են, նրանք մեծ խմբերով գուրս են զալիս ծովափի հանգստանալու։ Օամաքի վրա ինասում են իրանց ձագերին։ Ի հարկե ցամաքի վրա նրանք շատ դժվարությամբ և անշնորհք են շարժվում։

Փոկերը շատ զգույշ կենդանիներ են։ Նախ քան ջրից ցամաք գուրս զալը՝ մանրակրկիտ դիտում են շուրջը, իսկ զուրս գալիս խըմքերով հանգստանում են և պահապաններ են նշանակում։ Փոկը սուր տեսողություն և լողություն ունի։ Հոտառությունը նույնպես նուրբ ե.

Նրանք շատ հեշտությամբ ընտելանում եւ կապվում են մարդու հետ։ Էնդհանրապես նրանք խելացի կենդանի յեն համարվում, ինչպես զունը նրանք շան նման հաջում են, այդ պատճեռով նրանց օծովաշուն անունն են տվել։



Նկ. 86. Փոկ.

Փոկերին նույնպես վորսում են նրանց ճարպի և նորթու համար։ Ցեվ նրանց վորսալը վոչ մի դժվարություն չի ներկայացնում։ Խնչպես տապահեք, նրանք սովորություն ունեն խմբւրու ցամաք գուրս գալու։

Յեզ վորովհետև նորից ջրի մեջ մտնելու համար մեծ նեղություն են քաշում և բավականին զանդաղում են, վորսորդները մեծ մահակներով վրա լեն հասնում և նրանց թակելով սպանում են:

#### գ. Զօրկ.

Զուկը բացառապես ջրալին կենդանի յե, նրա մարմինն ամբողջովին հարժարված և ջրալին կյանքին և նա ջրից դուրս ապրել չ կարող: Ձկները շնչում են խորիներով:

Վերցրեք տեղում գտնված վորեւ ձուկ և ուսումնասիրեք նրա մարմինը, նախ արտաքին և ագա ներքին որդանները:



Առանասարակ ձկների մեծ մասն ունեն իրիկաձև մարմին, վոր նըրանց մեծ զյուրություն և տալիս ջրի մեջ լողալու և շարժվելու:

Դունչը սրածալր ե, բերանը լայն: Բերանի լերկու կողմը, վերևի մասում գտնվում են խոկակափարիները, վորոնց տակ գտնվում են նրա խորիները կամ շնչառության որդանները:

Հնդհանրապես ղժիար և ձկան վրա վորոշել մարմին մրուս մասերը: Դնչի ծայրից մինչև խոկակափարիները կոչվում և զլուխ, կատարչի ծայրից մինչև նետանցքը՝ իրան, մնացածը՝ պոչ:

Պոչից մինչև զլուխը լերկու կողմից ձգվում և մի լերկար գիծ, վոր կոչվում և կողագիծ:

Լողակները, նրանի վրա դուք կնկատեք մի խումբ լողակներ, վոր կարելի լի լերկու տեսակի բաժանել՝ զույգ և կենս: Հասարակ ձողածուկը կը լողակները ունի լերկուսը մեջքի վըրա, մեկը՝ պոչի, մեկը հետանցքի կամ պոչատիկի: Զույգ լողակները գտնվում են մեկն իրանի լերկու կողմը՝ կրծքի լողակներ, մլուսը վորի կողմը՝ փորի լողակներ:



Նկ. 87. Տողաձուկ

գոր, իսկ մյուս մասը՝ կոշտ և ծակող վէերի նման: Առանձին մկան-

միջի միջով լողակները միացած են ձկան մարմին և զանազան կողմի վրա կարողանում են շարժութեա կատարել:

Անզույգ կամ կենտ լողակները ձկան մարմին տալիս են ուղղահայաց դիրք, իսկ զույգ լողակները՝ հավասարակշռություն: Ցերե նրա կրծքի լողակները կարենք, կամ թերով կապենք, նրա գութը կկախվի գեպի ներքեւ: Ցերե կրծքի և փորի մի կողմի լողակները կը բարձնի, ձուկը հավասարակշռությունը կկորցնի և կրնկանի մի կողմը վրա: Իսկ լեթե բոլոր լողակները կարենք, նա կպառկի ջրի լերեսին, մեջքի վրա, ինչպիս սատկած ժամանակ:

Շարժվելիս զույգ լողակները նավակի թիերի գեր են կատարում, նույն լողակները նաև զեկի գեր են կատարում, յիբք նա ուզում և աջ կամ ձախ ծովիք: Այս բոլոր շարժումները շատ լավ կարելի յի զիտել ոկվարիումի մեջ պահած ձկների վրա:

Վերջապես ձկան մարմին մեջ կա մի հատուկ որդան: այդ լողափամփառքնեն ե, վոր նրան ոգնում և ջրի զանազան խորության մեջ իջնել և բարձրանալ լողափամփուշը գտնվում և ուղիղ վողնաշարի տակ և արծաթափալ պատերով մի պարկ ե, գաղով լցված: Լողափամփուշի մեջ կան մկաններ, վարոնք կծկումներ անելով՝ սեղմում են փամփուշը, նրա ծավալը փոքրացնում: այդ ժամանակ ձկան մարմինը սուզվում և ջրի մեջ լեր փամփուշը նորից լայնանում ե, ձուկը բարձրանում և ջրի վերին շերտները:

Բոլոր ձկները լողափամփուշը չունեն:

Ձկան մարմինը ծածկ վածք և բեկուկներով: Վորոնք ուղիղ մաշկի վրա չեն գտնվում, այլ ծածկված են բարակ լորձնաւրն շերտով: Խոշորացուց ապակին նայելիս թեփուկները ձեզ կերեան կլոր վուկրե թեթեղիկներ, մի ծալքով մտած մաշկի ծալքերի մեջ, մրուս ազատ ծալքերով դարսված են իրար վրա, ինչպիս կտուրների կղմինդրները:



Նկ. 88. Լողափամփուշը




Նկ. 89. Թեփուկներ



Մաշկի վրա լորձնաւրն ութը նվազեցնում և ջրի գիմազրությունը յերբ ձուկը շարժվում է: Մաշկի մեջ կան նաև մեծ քանակությամբ գունավոր բջիջներ, վորից ձեկներն այս կամ այն գունն են ունենում:

Հեռացնեք, այստեղ կտեսնեք նրա բոլոր մկանները (համեմատեցնեք մարդու մկանների հետ): Կողաղծով մկանները բաժանված են յերկու մասի—մեջքի և փորի: Այդ մկանները բաժանված են առանձին թերթիկների և կազմում են զիգզագներ:

Զկան մկանները շատ ուժեղ են: Նրանց միջոցով նա արագ և թռիկ շարժումներ ե կատարում: Մեկ վայրկանում անցնում է 12 մետր, ցատկումներ և անում և ջրվեժներից վերև և բարձրանում:




Նկ. 89ա. Զկան մկանները

Բոլոր մկաններն ու փափուկ մասերը հեռացնելուց հետո կարելի է զիտել ձկան կմախչը: Շատ հարմար և լիփած ձկան կմախչը գիտեր կմախչի գլխավոր մասերն են:

1. Գլխի վոսկրները.
2. Վողնաշարը.
3. Անզույգ լողակների կմախքը.
4. Զույգ լողակների կմախքը:

Գլխի կմախքը շատ բարդ կազմություն ունի: Գանգը բազմաթիվ վոսկրներից և կազմված: Վերին և ստորին ծնուռները, խորհների կմախքը մի շաբթ վոսկրալին աղեղներից են կազմված:



Նկ. 90. Ձկան կմախքը

Գլխից մինչև պոչը ձգում ե գողնալարը, իրանի շրջանում վուերին կպած են կօպերը, զորոնց ծալքերը սուր փշեր են կազմում: Կրծանկը չունի:

Մարսողության խողովակն սկսվում ե բերանից, հետո գալիք և զլանք, վորի պատերի վրա գտնվում են խորհային ճեղքերը: Հետո գախում է կարճ կերակրափողը, նրանից հետո՝ լախածավալ և պարկածն առամսություն հետո զալիս և աղիքը, վոր յերկու զալար անելով՝ իջնում ե և վերջանում ենանցենիք: Մատամոքսի և աղիքի պատերը ծածկված են փոքրիկ գեղձերով, վորոնց արտադրած հլութերի շնորհիվ կերպուրը մարսում է թացի սրանից, ձկան փորի խոռոչում կա մի մեծ մարսողական գեղձ—լյարզը: Նա արտադրում է լոփի կոչված հյութը և թափում է աղիքի մեջ: Մարսողական հյութերի ոգնությամբ կերած կերպուրը դառնում է հեղուկ զանգված, աղիքների պատերի միջով ծծվում ե ներս և հավաքվում և առանձին ակտատա անօրների մեջ: այնտեղից գնում, խառնվում և արյան մեջ, իսկ արյունը առնում է մարմնի բոլոր մասերը:

Ձկան օնչառությունը յիվ արյան ցջանառությունը.—Ձկները շընչում են խորհներով: Չուկը ջրի մեջ անդադար բերանը բաց ու խուփ և անում, ջուրը կուլ և տալիս, խորիքի կափարիչը բարձրացնում է և չուրը դուրս թափում: Չուրը ներս քաշելիս վոչ թի ստամոքս և ուղարկում, այլ խորաճնեղքերով անց և կացնում և դուրս թափում: Այդ բանում կարելի լի շատ հեշտությամբ համեզվել: Ջրի մեջ ածեց գունավոր փոշի և զուք կնկատեք, վոր փոշին ջրի հետ մտնում և ձկան բերանը և խոկակափարիչի տակով դուրս գալիս:


Մենք արդեն գիտենք, թե շնչառությունը կենդանու համար ինչ նշանակություն ունի: Կենդանու մարմնի մեջ կուտակված ածխաթթու գազը հեռանում է, և նրա փոխարեն թթվածին և ներս մտնում արյուն միջնոցով:

Ձկան արյունը, ինչպես նաև մյուս վողնաշարավոր կենդանիներինը, իր մեջ պարունակում է բազմաթիվ մանր կարմիր զնդիկներ: Այդ կարմիր զնդիկների մեջ գտնված նյութն ընդունակություն ունի թթվածին կլանելու և հարկ յեղած զիալքում զլուրությամբ նրանից բաժանվում է:

Ձկան արյան շրջանառության որգաններն են՝ սրբը, վոր մղում և արյունը, և բարակ անորները, վրոնը արյունը տարածում են մարմնի բոլոր մասերը:

Ձկան սիրտը մկանային մի պարկ է, վոր բաժանված և յերկու մասի—նախախոռոշի և սրտախոռոշի: Արյունը մարմնի բոլոր մասերից վերադառնում է սրտի նախախոռոշը, այնտեղից լցվում է սրտախոռշը, իսկ սրտախոռշից գծում և դեպի խորհները Խորկնօրի մեջ արյան մտնոթեկները բաժանվում են չափազանց բարակ խողովակների, վորոնց

Կոչվում են մազանորներ։ Խոհկների պատերի միջով կատարվում է ածխաթթվի և թթվածնի փոխանակություն։ Զրի մեջ գտնված թթվածինն անցնում է արյան մեջ, իսկ արյան ածխաթթու գաղը լրի մեջ։ Այս ձևով արյունը հարստանում է թթվածնի նոր պաշարով և այդ անդից գնում է ձկան մարմինի մյուս մասերը, վորտեղ նորից բեռնավորվում է ածխաթթու գաղով և վերադառնում սիրտը։ Այստեղ սրտից նոր մզում ստանալով՝ հոսում է խոհկների մեջ, մաքրվում և և ելք կրկնում նույն շրջանառությունը (համեմատեցնեք մարդու արյան շրջանառության հետ։ Ինչ տարբերություն եք նկատում)։




Նկ. 91. Ձկան արյան շրջանառությունը

Ձկան սիրտը դանդաղ է բարտիսում, մի բովեյում ընդամենը 20-անգամ (մարդունը՝ 70)։ Նրա համեմատ ել արյան շրջանառությունը առնդարձ է կատարվում։ Բացի այդ՝ զրի մեջ գտնված ողի թթվածնի քանակը բիշ է։ Իսկ հայտնի լե, վոր վորքան քիշ թթվածին մտնի արյան մեջ, այնքան քիշ չերմություն կդոլանա մարմինի մեջ։ Հետևաբար, ձկան մարմինի բարեխառնության աստիճանն ել համեմատաբար ցածր է, քան մյուս կենդանիներինը։ Այդ պատճենով ձկները համարվում են սառնարլուն կենդանիներ։ Նըրանց սեփական ջերմությունը չի կարող զրի բարեխառնությունից շատ բարձր լինել։




Նկ. 92. Սէրու  
կու կողմօն նրանք թունդ կարմիր գույնի բարակ թիթեղանման մարմիներ են։ Նրանցից գուրք են գալիս միզատար խողովակներ, վորոնք իրար հետ խառնելով կազմում են լնդանուր խողովակ և մի փոքր լայնանալով՝ կադ-

րում են սիզափամփուշ։ Միզափամփուշը բացվում է հետանցքի միջ-




Նկ. 93. Ձկան ներքին որդանները

Նյարդային համակարգը կարելի է լուսաբ մասի բաժանել՝ 1. զիսի լիվ սեզիի ուղեղները 2. նյարդեր և 3. զզայացաններ։ Տեսնելով միայն ձկան նյարդային համակարգի նկարները և նրանց մասերը՝ գույք կարող եք վերհիշել մարդու համապատասխան սրգանները և համեմատություն անել։ Ձկան որդանների կատարած աշխատանքները նույնն են, ինչ վոր մարդունց։



Նկ. 94. Ձկան ուղեղը

- γ. հոտառության բլթակը.
- α. առջեփ կիսագունդը.
- β. միջին ուղեղը.
- ζ. փոքր ուղեղը.
- δ. լերկայնաձև ուղեղը.
- ε. վողնուղեղը.




Նկ. 95. Ձկան աչքը

- 5. դրսի պինդ թաղանթը.
- ch. անոթաթաղանթը.
- τ. ցանցաթաղանթը.
- ir. ծիածանաթաղանթը.
- l. գոսպնյակը.
- α, α'. աչքի խորշերը.
- no. ակնողության նյարդը.




Նկ. 96. Մեջքի ուղեղի հասածք  
նրանից գուրք լեզող նյարդեր

Բազմացումը. Ձկները բազմանում են ձվիկներով, վորոնց սպառքար տառմ են խավյար կամ ձկնկիր: Ձկնկիթ ածելու ժամանակը դա-



Նկ. 97. Ձկան հոտառության գործարանը

ո. քթի բացվածքը.  
ի. հոտառության  
բլթակը.



Նկ. 98. Ձկան սերբնականջը:

Զուկը արտաքին ականջ չունի.  
ա, ի - պարկիր և հավելվածները.  
լ - կիսաշրջանալին աղեղները:

Նազան ձկների մոտ տարրես ե, բայց ընդհանրապես զարնան սկիզբներն ե տեղի ունենում, եղ ձուկը մեծ քանակությամբ ձվիկներ և բաց թողնում զրի մեջ, նրանք զրի մեջ արուի միջոցով բեղմնավորվում են և զարգանալու ընդունակություն են ձեռք բերում:

Տարրեր ձկների եղերը, աարեր քանակով ձկնկիթ են ածում միևնույն ժամանակամիջոցում:

#### Որինակ՝

Գառնաձուկն ածում ե մինչև 40 հոտ ձվիկ.

Փշաձուկն 80

Կորմրախայտը 1000

Քարթակը 850 000

Գայլաձուկը 100.000

Մածանը 40<sup>0</sup>,000

Ոսետը 1,000 000

Փրփրուկը 4,000,000

Ձկների այսպիսի մեծ քանակությամբ ձկնկիթ ածելը մեծ կազմունի նրանց զարգացման պայմանների հետ. Խակապես ամեն կենդանի տեսակ աշխատում ե իր գոյությունը պահպանել միայն իր սերնդի կյանքն ապահովելով:

Յերեակայեք՝ ինչպիսի պատահականությունների լին լինթակաձկնկիթները և նրանցից դուրս լիկուծ ձկնիկները. Կարելի լին հաստատապես ասել, վոր ծածանի հարյուր հազար ձվիկներից շատ չնչին քանակությամբ են մինչև զարգացման վերջը զիմանում: Նրանցից շատ շատերը կեր են դառնում այս կամ այն զիշատիչներին, կամ վոչնչանում են զանազան պատահաբներից:

Այժմ հասկանալի լի, թե ինչու վորոյ ձկներ հօկտյաշկան ըստակությամբ ձկնկիթ են ածում:

Բայց բոլոր ձկների սերունդներն ալղղես պատահականության չեն թողնված, կան ձկներ, վորոնք շատ քիչ քանակությամբ ձկնկիթ են ածում, բայց նրանց վրա առանձին հոգատարություն են տնօւմ, որինակ՝ փշաձուկ կոչված փոքրիկ ձկնիկը:



Նկ. 99. Փշաձուկ և իր բունքը

Նախ քան եզր ձու յե ածում, արուն զրի հատակում բույսերի կտորանքներից բուն և հյուսում: Ալդ բնում եղերը (սովորաբար նրանք մի քանի հատ են լինում) ձկնկիթ են ածում, վարոնց պաշտ-

գունության հոգատարությունն իր վրա յե վերցնում արուն. նա վոչ մոքի մոռ չի թողնում, նույնիսկ եզերին, և հարկե, այսպիսի պալման ներում փշաձկան սերնդի կլանքն ապահովված և և նրանց ձկնիկ ներն ավելի քիչ են փշանում:

Ձկներից մի քանիսը ձկնիթ ածելու շրջանում տեղափոխություն են կտարում կամ զարում են. Այդ թափառակարգիկ ձկները մեծ մասմբ ծովաբնակներ են. Ձկնիթի ժամանակ հավաքվում են մեծ ցերամերով, կամ ինչպես ասում են՝ մասուներ են կազմում: Այդ վտառները շարժվում են դիպի գետաբերանները, հաճախ հսկայական տարածություններ կտրելով: Ճանապարհին այդ վտառները գնալով բազմանում են: Միաժամանակ, գետ մասն լուց առաջ, նրանք գետաբերանի մոտ կանգ են առնում և ամբողջ հրոսակախմբերով ներս են խռովում հոսանքին հակառակ՝ դիպի վերև, և ճամախ շատ հեռուները, ձկնիթ ածելու հարյար տեղ վորոնելու համար:

Սի քանի ձկների վտառներ լեռքեմն ալնքան բազմաքանակ են վիճում, վոր ինչպես ասում են՝ շարժվում են իրար ուսի բարձրացած:

Ձկնիթ ածելու ց հետո յել միառժամանակ նրանք մնում են գետերում բանտարկված և սովորաբար դեպի ծով են վերադառնում ավելի փոքրաքանակ վտառներով:

Ուրիշ ծովաբնակ ձկներ բոլորովին չեն գնում գետերը, բայց ուղևորվում են ավելի ծանծաղություններ և ալնտեղ ձկնիթ ածում:

Կան այնպիսի ձկներ ել, վորոնք ընդակառակը դեպի ծովը են գնում և հսկայական տարածություններ կտրելով՝ մտնեմ են ամենաշուրջ տեղերը և անտեղ ձկնիթ ածում, իրանք շատ հաճախ ալլես յետ զառնալ չեն կարողանում և ալնտեղ ել վոչչանում են, իսկ նրանց նոր սերունդը մի քանի ժամանակից հետո վերադառնում և գետի հայրենին գետը:

## Ձկների ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ՅԵՎ

### ՁԿՆԱՄԴԻՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ձուկը մարդու կարենոր սննդանյութերից մեկն ե, և կան վալեր, վարտեղ նրա սննդի միակ աղբուն ե, բնական ե, վոր մարդը պետք ե հետաքրքրվեր ձկների կյանքով, նրանց ընակավայրերով և նրանց քազմանալու յեղանակով:

Մենք արդեն տեսանք, վոր մի քանի ձկներ չափազանց բազմանալու ընդունակություն ունեն, հարկավոր և նրանց համար սպազմել հարմար պայմաններ. Որինակ՝ ծածանի եղը սեկ անգամից ածում և 400000 ձկնիթ և կարողանում է ապրել ջրավազաններում Մարդը շատ վաղուց և հետաքրքր յեղել նրանց բազմացնելու և կարելի լի ասելը վոր ներկայում ծածանը, բարիս բուն իմաստով, դարձել և ընտանիք

գինդանի: Լճալին ձկնարդյունաբերության մեջ նա առաջնակարգ գեր և խաղում:

Խոշոր արգունաբերական նշանակություն ունեն հրաւասային ծովերում և սիրիլյան գետերում ապրող մի քանի ճարպառատ և համեղ ձկներ, ինչպես որինակ՝ լաւութեան կամ քառավիր: Նրանք տեղական ագրանակության մննդի զվարավոր աղբյուրն են կազմում:

Մը ընթաց գետերում ապրող կարմախայթը, վերջապես Սկանե լճում բազմացնող իշխանը, բախտակը, և սիրան նույնպես արդյունաբերական նշանակություն ունեցող ձկներ են:

ԽՈՀՄ-ում կան և ամեն տեղ կազմակերպվում են ձկնարդյունաբերական գործարաններ, վորանդ արհեստական կերպով բուժում են զանազան տեսակի ձկներ:

Արհեստական բեղմնավորությունը կատարվում է հետևյալ ձեռք: Ջերցնում են ձկնիթով հարուստ եղ ձուկը, թեթև սղմում են և ձկնիթները քամում չոր թասի մեջ: Հետո նույն ձեռք արու ձկան միջից քամում են սերմնալին հնզուկը մեկ որից թասի մեջ, նրա վրա մի փոքր ջուր ալիքացնելով, խառնուրդը լցնում են ձկնիթների վրա և թողնում: Բեղմնավորված ձվիկներն առանձնացնում են առանձին հոսուն ջրով ակվարիումների մեջ և թողնում, վոր նրանք այնակ զարգանան և դառնան փոքրիկ ձկնիկներ: Հետո այդ ձկնիկները տեղ զափոխում են ավելի մեծ ջրավազաններ, վորտեղ նրանք մեծանում են և զառնում իսկական ձկներ:

## 2. ԿՅԱՆՔԸ ՈԴՈՒՄ


1. Թոշութեներ. Խչպես ջրում, այնպես ել ողում ապրում են բազմատեսակ կենդանիներ, ինչպես՝ շղիկը, միջատները և ալլեն, բայց նրանց մեջ ամենից աչքի ընկնողը՝ թոշուններն են:

Թոշունները մրու վողնաշարավորներից տարրերվում են նրանով, վոր նրանց ամբողջ մարմինը ծածկված և փետուրներով: Նրանց վերջավորություններից առնիբ զույգն առանձնապես ծառալում են վորպիս թոշելու գործիքներ—բիվեր. Մարմնի կազմը հարմարված և թըս չելու պայմաններին ծիւտ ե՝ կան նաև չթոչող կամ թոշելու անընդունակ թոշուններ, ծալց նրանց մա, մնակազմը ցուց և տոլիս, վոր նրանք ել մի ժամանակ թոշելիս են լեղել, ալսինքն առաջ են լեկել ալնպիսի նախահորից, վոր թոշելու ընդունակ և յեղել:

Եյական գծերով բոլոր թոշուններն ել նման կազմությունն ունեն կենցաղը և միջավայրը նրանց մարմնակազմի սեջ վորոշ փոփոխություններ և մտցրել:

Վերցնենք, որինակ՝ մեզ ամենքիս ծանոթ նմնդուկ:

Ծննդղուկի, ինչպես նաև մյուս թռչունների մարմինն իլիկածն և գոր մեծ հարմարություն և տալիս նրան թռչելու։  
Ամրող մարմինը ծածկված է փետուրներով, իսկ վոռքերը՝ լեղի թեփիկներով։




Նկ. 100. ձնճղուկ

Գանդի վոռկրները ծառված են իրար հետ և նրանց կարերն անկատելի յնն ։ Ծնոտները լերկարացած են դեպի առաջ և կազմում են նրա կառուցք, առանձներ բոլորովին չունեն։ Առանձների բացակայունը բավականին թեթեվացնում է զանգը։

Կզի վողերը հողավորված են ազատ կերպով, արդ պատճառով թռչունների վիզը շատ ճկուն և շարժուն, համեմատաբար ախճան լերկար և, վոր կտուցի ծայրով ժարմնի բոլոր մասերին կարողանում են մոտենալ առանց դժվարության։

Կրծքի վողերի և կողերի անշարժ միացումից կազմվել են իրանը։ Կողերը միացած են մեծ կրծուկրին և նրանցից լուրաքանչլուրը լերկու շարժական մասեր ունի, վարոնցից մեկը միանում է կրծքին, իսկ մերսը՝ վողնաշարին։ Թևերն ուստագուում միջով միանում են կրծքի վանդակին լերեք վոսկրների միջով—թիակի, աղոսսկրի և անցրակի։ Ցերկու անբակների ծալքերը միանալով կազմում են մի աղեղնածն և առաջական վոսկր, վորին նեալ են առում։

Թռչունի թևը լուրահատուկ ձև ունի, բայց նույն լերեք մասից



Նկ. 101. ձնճղուկի կամիքը

և կազմված, ինչ վոր մարդունը—բազուկ, կանգուն և ձեռք։ Թռչունի ձեռքը յերեք մատ ունի, վորոնցից մեկը համապատասխանում է մեր բութ մատին։

Կոնքի վոսկրները ձուլված են վողնաշարի հետ։ Վոտքերը նույնական լերեք սասից են—ազդե, սրութե և քար։ Թաթը կազմված է խողովակածն յերկար վոսկրից և չորս մատներից։ Թռչուններն ընդհանրապես քայլում են մատների վրա։ Ծննդղուկի, ինչպես նաև թռչունների մեծ մասի, մատներից յերեքն ուղղած են դեպի առաջ, իսկ բութ մատը՝ դեպի լեռ։

Թռչունների մկանները նույնական առանձնահատուկ կազմություն ունեն։ Նրանց սեղքի մկանները շատ թուլլ են զարգացած, վորովհետև նրանց մարմին այդ մասն անշարժ է։ Դուք արդեն գիտեք, թե հավի մեջքի վրա ինչքան քիչ միս կա։ Լավ զարգացած են վզի մկանները, թերերի և վոտքերի մկանները։ ամենախոշոր և ուժեղ մկանը կրծքի լերկու կողմում գտնվածն է, վոր համարյա նրա ամբողջ մարմինը մասն է կրում։

Ինչպես ասացինք, թռչունի մարմինը ծածկված է փետուրներով և բմբուկով. դրանք վերնամաշկի լեղջերալին հավելվածքներն են, ինչպես սողունների շապիկը, կաթնասունների բուրդը և մազը։

Խոշոր փետուրները կազմված են բնից և հովիարից, Բնի ներքենի մասը դատարկ, լեղջերյա մի գլան և Հովհարը կազմված է բազմաթիվ լեղջերյա ճառագալթներից, կամ մօրուսից։ Սորուսն ել իր հերթին բաժանվում է ավելի մանր ճառագալթների, վորոնք առանձին կեռերով կամ կարերով միանում են հարեւան մորուսի ճառագալթներին, այնպես վոր, յերբ փետուրն ողի մեջ շարժվում է, զգում եք, վոր նրա բոլոր մասերը միացած մի ամբողջություն են կազմում և բավականին մեծ դիմագրություն են ցուց տալիս։

Բմբուլը փետուրից տարբերվում է նրանով, վոր ավելի փափուկ ձողեր ունի, մօրուսի վրա կեռեր չկան։ Ավելի պարզ կառուցվածք ունեն սաղմալին փետուրիկները, վորոնցով ծածկված են լինում ձվից նոր դուրս լեկած ճտերի մարմինները։

Բմբունները մարմինը պաշտպանում են ցրտից, իսկ փետուրները շարժող որգաններն են,



Նկ. 102. Փետուր

Ժամանակ առ ժամանակ թռչունը կտուցի ծայրով պոչի տակ

գտնված առանձին ճարպային զեղծերի արտադրած լուղով ոծում և փետուրները: Այդ յուղը փետուրները պաշտպանում են խոնավանալուց, ջուրը փետուրի վրայից սահում ե ցած, առանց նրան թրջելու: Այդ գեղձն առանձնապես զարգացած ե ջրաբնակ թռչունների մոտ, որինակ՝ սագի, բաղի և ալին:


Ամառվա վերջերին, մի քանի թռչուններ նաև գարնանը փետրափոխություն են ունենում: Հին փետուրները հետզհետե թափվում են և նրանց փոխարեւն հորերն են դուրս զալիս: Գարնանը փետրափոխության յենթարկվող թռչուններն ընդհանրապես զարդարվում են զեղեցիկ և պայծառ գույներով, առանձնապես արուները: Իսկ եղերը հասարակ և աննկատելի գույն են ունենում: Այդ նրանց համար խիստ ձեռնառ յե,—թռւխս նստած ժամանակ թշնամիներից աննկատելի են մնում:

Մարսողուրյան որգանները. Թռչունի բերանը կամ կտուցը բազմատեսակ ծառալություն ե անում. վոչ միայն նրանով կերակուր են վերցնում, այլ և բուն են շինում, լուղով ոծում են և ալին, մի խոսքով՝ թռչունի կը- տուցը մատների դեռ ե կատարում, Զանա- զան թռչուններ տար- բեր ձեմի կտուց ունեն, վոր հարմարված ե նրանց կենցաղին և գործածած կերակրին:

Կերակուրը կտու- ցից անմիջապես անց- նում ե կերաերափաղը, վորը մի լանցացած մաս ունի—հուզը, իսկ քու- ջից հետո գալիս ե զեղ- ձավոր ստամոքը, այն- տեղ կերակուրը մար- սողական հութերի աղեցությամբ քա- քայլվում է: Ճնճղուկի, աղազնու, հավի և առ- հասարակ հատիկակեր թռչունների ստա- մոքը շատ հաստ մը- կաններով պատեր ու- նի, վորի ներսի մա- կերեսը խորդուքորդ և: Այնակ կերակուրն ալդ պատերից արորվում

Նկ. 103. Աղազնու ներքին բազմաները

կերեսը խորդուքորդ և: Այնակ կերակուրն ալդ պատերից արորվում



և յերկանքի նման աղացվում: Կերակրի արորդելուն նպաստում ե նաև ալն, վոր հատիկակեր թռչունները սովորություն ունեն քարեր և ա- վազի կտորներ կուլ ատլու: Ահա այդ քարերը լրացնում են ատամնե- թի բագր:

Ենչառուրյան որգանները. Լեզվի վրա վերևի մասում գտնվում ե կոկորդի ձեղբը. հետո զալիս ե ջնչափողը, բրոնխները և թոքերը: Թոքերը կպած են մեջքին և գտնվում են կողերի և վողնա- ջարի արանքում: Ն անք սպունգանման յերկու մեծ պարկեր են և հարաբերություն ունեն վոսկրախորչի և ներքին որգանների արան- քում գտնված ողապարկերի հետ: Այդ պարկերի պատերն այնքան նուրբ և բարակ են, վոր թռչունի մարմինը հերձելիս սովորաբար պա- տռվում են: Թռչունի համար այդ ողապարկերը մեծ նշանակություն ունեն, Միջորդանային տարածություններն ու վոսկրախորչերը ողով լցնելով մասմինն զգալի կերպով թեթևացնում են և դյուրացնում թռչելու դորձը:

Արլան օրջանառուրյան որգան- ները. Թռչունի սրտի և արյան շրջանառության կառուցվածքը վոչնչով չի տարբերվում մարդու սրտի և արյան շրջանառության կառուցվածքից: Համեմատեցնեք այս սիստեմին մարդու արյան շրջ- անառության սխնմալի հետ:

Յեռանդուն ջնչառության և շրջանառության շնորհիվ թռչունների մարմինի մեջ միշտ պիկելի շատ ջերմություն ե գոյանում, քան մյուս կեն- գանիների մեջ: Նրանց ջերմությունը զգալի չափով բարձր, Զմեռ ժամանակ ծալրագույն հյուսվածում նրանց մարմինի ջերմության և շրջապատի բարեխառնության աստիճանը հասնում ե ց. 80°-ի: Այդ ջեր- մությունը պահպանվում ե փետուրների և ողա- պարկերի մեջ գտնված ողի շնորհիվ: Ցուրտ յե- զանակներին, կամ քնած ժամանակ, թռչունի նկ. 104. Թռչունի արյան շրջանառությունը սղապարկերը լցվում են ողով, ներքին որգան- ածխաթթվով հարուսա- ները շրջապատվում են ողի հաստ շերտով և անոթները նկարված են ու, իսկ թթվածնովը— սպիտակ շերտով ար- կերմակի պիս նրա պաշտպանում:

Ցերիկաները, նյարդային համակարգը և յունը վերադարձում ե զգայտարանները նույնն են, ինչ վոր մյուս վող- դից . ս—ած սրտախորշը, վորտեղից թոքային զար- կերակով թ—թափում ե անախախորչը: Այնա- նաշարավորներինը:

Ցուրտ թռչունները բազմանում են ձվերով, թոքերի մեջ: Զաված ար- յուն ծածկված ե կրակին բարակ կճեպով: Կճեպը յունը ըն—շերակով թափ- վինում ե կամ բոլորովին սպիտակ, կամ գունա- գում ե ձափ նախախորչը վոր գծերով ու կետերով ծածկված: Զարմանալի ա, այնակաղից ել մարմինը



մեծությամբ, ձևվ, մսառատությամբ, ձվառատությամբ և այլ հատկություններով:

Գյուղա ոնքեսական թոչունների տված ոգուտները շատ են: Ամենից առաջ նրանք տալիս են ձու, միս, փետուր և աղբ:

Ով չի իմաստում, վոր ծունդ գուրամարս և սննդարար ուտելիք է Հավասարաչափ ոգտակար թէ լերեխանների, թէ ծերերի և թէ հիվանդների համար:

Թոչունի միսը նույնպես համեղ և դյուրամարս ե, հատկապես կը ծքի սպիտակ միսը, վոր բժիշկները խորհուրդ են տալիս գործածեալու հիվանդ և թույլ ստամոքս ունեցողներին:

Փետուրը գործ ե ածվում փափուկ բարձեր և վերմակներ պատրաստելու համար: Գեղեցիկ փետուրները պետք են դալիս զարգացնելու:

Թոչունի աղբն ամենալավ պարարտանյութն ե ալղինների, քանչարանոցների և զաշտերի նողը պարարտացնելու համար:

Թոչուններն առնասարակ գյուղատնտեսությանը մեծ ոգուտ են տալիս՝ մասսակար միջամտներ, վորդեր և խիստնջներ վոչնչացնելով:

Նրանց տրեկան ածած ծփի սննդնդը 2—4 անգամ ովեալ շատ ե, քան նրանց մարմնից ստացածը: Նրանք արագ մեծանում են և հեշտ ու արագ ել բաղմանում:

Ընտանի թոչունները բավականանում են տնտեսության թափանչիններով, անպետը հատիկներով և մոլախոտերի սերմերով: Այնպես վոր համեմ ստաբար քիչ ծախք և խնամք են պահանջում:

Սակայն խոշոր տնտեսություններում նրանց քանակը կարելի թափանյակը հաղարների համար համար համար համար համար համար:

Ընտանի թոչունները վորոշ քանակությամբ ծու ածելուց և ետո թուլիս են սննդում, այսինքն համառ կերպով նստում են բնում և թուլ չեն տալիս, վոր իրանց այստեղից հանեն: Թուլիս նստած հավը բավականին չար ե, ձայնը փոխվում ե, կրթկրթում ե, իսկ բարն ու ապը ֆղացնում են:

Թուլիս նստելու եցությունն այն ե, վոր թոչունն իր մարմնով ձվերը տաքացնում ե ց. 39—40<sup>0</sup>, մինչև վոր նրանցից ձագեր գուրս գան:


Կարելի լն արհեստական կերպով ել այդ պայմաններն ստեղծել և ավելի մեծ քանակությամբ ճաներ ստանալ:

### 3. Արհեստական թխումն:

Ինչպես տեսանք, թխսկանն իր մարմի ջերմությամբ տաքացնում ե ձվերը, և այդ ջերմության շնորհիվ ծփի սաղմալին բիծն ոկտում և զարգանալ և ճուտ դառնալ:

Կերպով նկատված ե, վոր սպիտակ գույն ունենալու թոչունները ձվերը, վորոնց բունը վշակների մեջ կամ թագնված տեղերում ելլուսում, որինակ՝ բլի, վալատփորի, աղավնու ձվերը իսկ վորոնց բները բաց են և վոչ պաշտպանված, նրանց ձվերը քեզեր և կետեր ունեն և նման են շրջապատկ առարկաներին—հողին, տերեններին:

Զփի մեջտեղում դեղնուցն ե, նրան շրջապատում ե սպիտակիցը Դեղնուցի մի կողմը լերեսին զտնվում ե մի վոքքիկ սպիտակավուն բիծ—սաղմը, վորից աղազայում պիտի զուանա ճուտը, Դեղնուցը զարգացող սաղմի համար ծառայում ե վորդիս սննդնդ:



Նկ. 105. Զփի կաղմը

Տերեք շուրս են դալիս կան թոչուններ, վորոնց ճտերը մերկ և կուլը պտը դուրս են գալիս, ճնողները միաստամանակ նրանց խնամում և կերակրում են, որինակ՝ աղավնիները: Իսկ ուրիշներնը՝ ինչպես որինակ, հալի և որինակ՝ աղավնիները թափամաղ են լինում, աչքերը բաց, անմիջապես կարուղանում են մուր լետից քայլել, կամ ջրում լողալ և կերակրուր փընտել:

### 2. Քննանի թոչունները յեզ նրանց սված ոգունները.

Այն թոչունները, վորոնք թոչելու դժվարություններ են ունեցել կերի մեջ առանձին խտրություն չեն զբել և նստակյաց դառնալու տրամադիր են յեղել, մարդը նրանց ընտանեցրել ե, նրանց ցեղն աղավնացը և ոգտագործել զանազան պետքերի համար:

Այն ընտանի թոչունները, վորոնց մարդը կերակրում և խնամում է ծու, միս և փետուր ստանալու համար, կոչվում են զյուղատնտեսական թոչուններ:

Նրանցից ամենատարածվածներն են՝ հավը, սաղը, բաղը և նրեդուիհավը:

Հավի բաղմաթիվ ցեղեկեր կան, վորոնք իրարից տարբերվում են՝

Բայց թխոկանն որական մի քանի անդամ տեղից վեր և կենում  
կեր ուտելու, կամ մի փոքր շարժվելու համար: Այդ ժամանակ ձվերը  
սառչում են: Ենթե այս բանը զատ հաճախ չի կրկնվում, ձվի այդ  
չափով սառչելը վոչ թե վնասակար է, այլ և կարուր զորովնետև այդ  
ժամանակ ձվի մեջ թարմ ող և ստնում, իսկ զարգացող սաղմի համար  
թարմ ողն անհատնշտ ե: Լավ թխոկանը յերեսն ձվերը վոտքով  
շարժում է: Այս ևս անհրաժեշտ է: յեթե ձուն յերկար ժամանակ պառ-  
կած մնա մի կողքի վրա, սաղմը կարող է կաշել կճեպին և վնասվել:

Ենթե սենք կարողանանք ձվերը դնել այնպիսի պայմանների  
մեջ, վոր բնական թխման պայմաններից չտարբերվի, սենք կարող  
ենք ձգորդ ճուտեր ստանալ առանց թխոկանի: Շատ վաղուց մարդիկ  
այդ մասին մտածել են և արհեստական թխման կանացան ձեւը հնա-  
րեր: Այժմ հնարել են մի գործիք, զորի միջոցով հեշտ և հարմար յե-  
ղանակով ձվերից ճտեր են ստանում: Այդ գործիքը կոչվում է ինկու-  
բատ (թխոկան):

Ինկուբատորի նշանակությունը թոշնաբուծության համար շառ  
մեծ է: Բնական թխման ժամանակ թոշնաբույժը կախումն ունի ար-  
տաքին պայմաններից: Նա միայն այն ժամանակ կարող է ճուտեր  
ունանալ, յերբ իր արածազրության տակ թխոկաններ ունի: Ինկու-  
բատորը նրան ազատում և այդ կախումից ինկուբատորը հնարավո-  
րություն և տալիս ճտեր ստանալու, յերբ չարար և գտնում, թե ա-  
մառը և թե ձմեռը, մի խոսքով ամբողջ տարին:

Ինկուբատորը մի ուրիշ առավելություն ել ունի՝ կարող ես ու-  
ղած քանակությամբ ճտեր ստանալ, սկսած 1—100—200 և ավելի:  
Ամերիկայում գործ են ածում նույնը 20.000 ձվանոց ինկուբատոր:

#### 4. Ինկուբատորի կազմությունը յեվ նրա գործադրումը.


Ինկուբատորը մի արկղ և կամ պահարան, զորի միջ հարմարու-  
թյուններ են սաւողած՝ վորոշ չերմաստիճան պահպանելու: Ինչպես  
տեսանք, ձվի սաղմի զարգացումը պահանջում է ց. 39—40° չերմու-  
թյուն:

Զանաղան տեսակի ինկուբատորներ կան: Նրանցից մի քանիսը  
տաքացվում են յեռացրած ջրով, —որը յերկու անդամ սառը ջուրով  
հեռացնում են և յեռացրածն ածում:

Մյուս տեսակը վերին մասում ջրի պահեստ ունի, ջրի միջոց  
հորիզոնական մի խողովակ և անցնում, այդ խողովակը տաքացնում  
են լամպով: Այս ինկուբատորներն ունեն հատուկ կանոնագիշներ,  
զորի շնորհիվ ինկուբատորի չերմությունը 39°, լց չի բխում և 40°: ից  
ել չի բարձրանում:

Կան նաև ելեկտրականությամբ տաքացվող ինկուբատորներ:

Բոլոր ինկուբատորներն ել ողափոխության հարմարումներ ու-  
նեն: Ձվերը շարում են իրար կողք-կողքի, մի տափակ բաց արկղի միջ:  
Արկղը տեղավորված է տաք ջրի պահեստի տակ և կարելի լե ուղած



Եկ. 106. Ինկուբատոր

ժամանակ հանել և նորից իր տեղը դնել: Արկղի հատակն ունի բաղ-  
մաթիվ անցքեր, վորոնց միջով ողը և ջրի գոլորշիներն ազատ անց  
նում են:

Ձվերն անպայման պետք ե խոնավ միջավայրում լինեն, յերե  
վոչ, կը ըստան և կվոչնանան: Բնական պայմաններում թխոկանի  
խոնագությունն ե պահպանում:

Ինկուբատորները սովորաբար կրկնակի պատեր են ունենում և  
նրանց արանքում լցնում են թեփ կամ չերմության մի այլ վատ հա-  
զորդիչ նյութ, վորպեսզի գործիքը լուս չսառչի:

Ինկուբատորը գործի դնելուց առաջ ախտահանում են, հետո ջուրը  
լցնում, լամպը վառում և 3—4 որ փորձում, թե նա ինչպես է գործում:

Ինկուբատորը պետք ե դնել միանգամայն մաքուր և կանոնափոր  
ողափոխություն ունեցող շնչքում: Այդ շնչքի բարեխառնությունը  
չպետք ե արագ իջնի կամ բարձրանա: Ինկուբատորը պետք ե սովոր-  
աբար պատից հեռու դնել՝ վորպերի վրա կամ սեղանի վրա:  
Ձվերը նախ պետք ե ընտրել և ապա դնել ինկուբատորի մեջ: Ձերմությունը ց. 39°,—40. պետք ե լինի, սրանից ավելի՝ վոչ մի  
դեպքում:

Ձվերը դնելուց հետո մեկ և կես որ տեղից չեն շարժում, իսկ  
այնուհետև որը յերկու անգամ սառեցնուի են և շուր տալիս: Առավոտ-  
լան և յերեկոյան արկղները հանում, սեղանի վրա յին դնում 5—15  
րոպեի: Այնուհետև ձվերը շուր են տալիս և իրանց տեղը դնում: Վոր-  
պեսզի վոչ մի ձու առանց շուր տալու չմնա, մատիտով նշան են ա-  
նում:

Հինգերորդ կամ վեցերորդ որը ձվերը ստուգում են ովոսիոգով,  
անսաղմ և փչացած ձվերը հեռացնում են: Այս աշխատանքը կատա-  
րում են նաև տասերորդ և տասնմեկերորդ որը:

Տասներեց, քսան և քսանմեկյերորդ որեր ում ձվեր լ է ու ուռւմ են և վոչ ել շուռ տալիս:

Եերք ճտերը զուրս են գալիս, նրանց դնում են ինկուբատորի ջարանոյը. Այստեղ ճտերը մի քանի ժամ մնում են և լավ չորանում:


Զորանոցից տեղափոխում են արհեստական մայրը:

### 5. Արհեստական մայր յեվ նուտերի խնամքը.

Բնական պայմաններում թխսկանը խնամում ե իր ճագերին, ըանց ման և ածում, կեր և ճարում, տաքաշնում ե իր թեվերի տակ առնելով, վերջապես պաշտպանում ե կատվից, բաղեյից և այլ թշնամիներից:

Ինկուբատորում հանած ճուտերն այդ խնամքից զուրկ են: Այստեղ մարդն ե, վոր իր հոգատար ձեռքով պետք ե նրանց խնամի, կեր տա, տաքացնի և թշնամլներից պաշտպանի:

Ճուտերը մրսկան են և սիրում են շատ տաքություն: Ահա դրա համար ել կա մի հատուկ գործիք, վոր կոչվում ե արհեստական մայր: Սա մի արկղ ե, վոր տաք ջրով, լամպով կամ մի այլ միջոցով տաքացվում եւ Արկղն ունի դուսակ և վարագույրներ, վորոնք փոխարինում են մոր թերին: Ճուտերը ցուրտ ժամերին մտնում են այդ արկղի մեջ, իսկ տաք և արևոտ լեղանակներին դուրս են գալիս զբոսնելու և քջուջ անելու:



Նկ. 107. Արհեստական մայր

Ճուտերի աճեցման գործն արդեն թռչնապահի ձեռքին ե: Ճուտերին հարկավոր ե ջերմութլուն, նա տալիս ե: Բոլոր ճուտերին պահում ե տաք հատակով սենյակում: Աջխատում ե, վոր շենքում միջանցիկ քամի չլինի:

Ճուտերը խիստ զգալուն են դեպի խոնավութլունը: Նրանց պետք ե պահել չոր շենքում և ամեն կերպ պետք ե խոլուսափել խոնավ և անձրեվային լեղանակներին նրանց դուրս թողնել:

Ճուտերին պետք ե պահել լուսավոր և մաքուր, լավ ողափոխություն ունեցող և արձակ շենքում: Արե, նույնիսկ լերեմն ցուրտ որերին ել պետք ե մի քանի րոպեյով դուրս բերել նրանց զբոսնելու:

Բաղիկների և սագիկների համար բակում պետք ե ունենալ վոչ խոր լճակներ: Սակայն 6—7 որ նրանց չի կարելի թողնել լողանալու Նրանք գեռ թուլլ են:

Ճուտերի հաջող աճումը կախված ե հարմար և զլուրտամար կե, բակրից: Նրանց՝ դուրս գալու ց հետո 24—30 ժամ՝ կարելի իւ վոչինչ չտալ

վորովհետև նրանց ստամոքսում դեռևս չմարսված դեղնուց կա: Գետք և ժամանակ տալ, վոր մարսեն, հակառակ դեպքում նրանք կարող են հիվանդանալ:

Այնուհետև նրանց բազմաղան սննդարար կեր են տալիս՝ պինդ ցեփած ձու, կաթով հունցած խմոր, կաթով լեփած ձավարի կամ բբնձի վլավ, մանրած միս, կանեփի սերմ, վորդեր և ալյն:

Խմելու համար՝ բբնձի ջուր, կաթ և թարմ ու մաքուր ջուր:

Առհասարակ ճուտերն, առանց վերոհիշալ կերերի, զանդաղ են աճում, յեթե այդ կերերը թանգ են, գործարաններում մշակված մսի և ձկան ալլուր են պատրաստում:

Եերք ճուտերը բավականին մեծանում են և վետուրներով ծածկում, նրանց տալիս են հատիկավոր կերեր և հանքային նյութեր:

Եերկու ամսական հասակից ճուտերին կերակրում են հատիկներով և կանաչեղենով:

Բաղերին և սագերին հատիկ տալ չի կարելի, — նրանց կտուցնայդ հասակում շատ փափուկ ե:

### 3. ԿՅԱՆՔԸ ՑԱՐԱՔԻ ՎՐԱ

Ցամաքի կենդանիները չափազանց բազմատեսակ են:

Մենք տեսանք, թե ջրային և ողային միջավայրն ինչպիսի հարմարութիւն ե ստեղծել այնտեղ ապրող կենդանիների համար: Չուկը կրում, կամ կետը և փոկը ջրում բոլորովին այլ մարմնային հարմարութիւններ ունեյին, քան թռչունը՝ ողում:


Նույնը կարելի յե ասել նաև ցամաքի վրա ապրողների համար: Բայց ցամաքի պայմաններն ամեն տեղ նույնը չեն: Մենք ունենք ցուրտ և տաք լերկիրներ, ունենք խոնավ և չոր վայրեր, անապատներ, տափաստաններ, լիռներ, ձորեր և այն, վորտեղ ապրող կենդանիները միջավայրի պայմաններին հարմարվելով՝ բազմազան ձեր են ունենում:

Բոլոր կենդանիներին ծանոթանալ մեկ անգամից անկարելի յե, մենք նրանցից կը նորենք մի քանիսը:

1) Բարեխառն յեվ տաք լերկիրների սողունները. Սողուններ են կոչվում՝ մողեսը, ո՞յը, կրիտ և կոկորդիլուր:

1. Սովորական մողեսը. Սովորական մողեսն ունի փոքրիկ զլուխ, լերկարավուն իրան, չոր կարճ վոտներ և շատ լերկար պոչ։ Մարմինն ամբողջովին ծածկած ե լեղծերային թեփիկներով, իսկ զլուխը կանոնավոր բաղմանկունի վահանիկներով: Փորի կողմը վահանիկները զասավորված են լայնութեամբ և վզի մոտ կազմում են մի ոճիկ: Պոչի վրա նրանք դասավորված են ողաձե:

Այդ պինդ և կոշտ յեղջերալիքն ծածկութը մողեսին պաշտպանում է վնասվելուց, յերբ նա սողում և չոր քարերի վրալով։ Այդ յեղջերալիքն շերտը ժամանակ առ ժամանակ թափվում և փոքրիկ կտորներով և նրանց փոխարինում են նորերը։ Այս իերեսութը կոչվում է մածկափոխության վրան։ Ամառվա ընթացքում նա մի քանի անգամ մածկափոխության և յենթարկվում։ Մողեսի պոչի վողերը դեռևս չփոսկրացած բարեկ շերտեր ունեն, այդ և պատճառը, վոր հեշտությամբ կտրվում են նորից վերանորոգվելու։ Մողեսի մարմինը վերևի կողմից մոխրա-կաւ նաշագույն և համապատասխանում է շրջապատին։ Այդ բանը նրան ոգնում և պաշտպանվելու իր թշնամիներից՝ ոձերից, իժերից և այլն։ Մարմնի տակի յերեսը բաց գույն ունի։




Նկ. 108. 1) սովորական մողես, 2) դլուխը տակից, 3) լեզուն.

Մողեսի բերանը լայն է, վերևի և ներքեւի ծնոտները նաև քիմքը ծածկված են փոքրիկ սուր ատամներով, վորոնք փոսիկների մեջ չեն, ինչպես մարդունը, այլ ամրացած են ծնոտների յեղքերին։ Այդ ատամներով նա կարողանում է վորդեր և միջատներ վորսալ և ուտել։ Նրա լեզունը յերկար և ծայրը յերկճյուղ, վորը բերանից դուրս և հանում և գործածում է վորպես շոշափելիք, նրանով ջուրը և խմում, թաթախելով և ներս քաշելով։

Մողեսի արյան շրջանառությունն անկատար է, այդ պատճառով նրա մարմնի մեջ չերմություն քիչ և առաջանում։ Նա իրեն անհրաժեշտ շերմությունը շրջապատից և փոխ առնում։ Ողի բարեխառնության բարձրացումով բարձրանում է նաև նրա մարմնի չերմությունը։

Հա ավելի աշխուժանում է, շնչառությունն ավելի լեռանդուն և կատարվում, արդունն ավելի արագ և շարժվում, իսկ ողի բարեխառնությունն իջնելու դեպքում, նրա արյունը ցրտանում է, նրա տրամադրությունն ընկնում է, վերջապես ըոլոբովին ցրտերն ընկնելիս՝ ձմեռային հուն և մօնում։



Նկ. 109. Մողեսի ներքին օրգանները

Ալստեղ պարզ է, թե ինչու մողեսները սիրում են տաք և արեգոտ տեղեր, ինչու նրանք ավելի շատ տարածված են տաք և արևագարձալին յերկիրներում։ Նրանք ավելի խոշոր չափերով լեզել են յերկրագնդի անցյալում, յերբ կլիման անհամեմատ տաք և յեղեւ։

Մեզ մոտ մողեսները մեծ մասամբ ապրում են քարակուլտերի մեջ, պատերի ճեղքերում, թփուտներում և այլն։ Տաք յեղանակներին նրանք պառկում են արևի տակ և միջատներին են հետապնդում, իսկ շուրջը և անձրևուտ յեղանակներին թագնվում են իրենց ըներում։

Գարնանը եդ մողեսն ավաղի մեջ ածում է 5—10 հատ փափուկ կճեպով ձվեր, մոտավորապես ճնճղուկի ձվերի մեծության և թողնում ե այնպես, առանց հոգատարության։ Հուլիսի վերջին, կամ ոգոստոսի սկզբին, այդ ձվերից դուրս են գալիս նոր մողեսներ։

Մեզ մոտ կան կենդանածին մողեսներ, այսինքն այդ մողեսները ձուն չեն ածում, այլ իրենց մարմնի մեջ պահում են այնքան, մինչև վոր սաղմի զարգացման շրջանը լրանում և պատռվելով՝ նոր մողեսները գուրս են գալիս, տպավորությունն ալիսկես ե, վոր նա կենդանի ձագեր և բերում։


Կան նաև անվաս մողեսներ, վորոնց շատ անդամ շփոթում են ոձերի հետ։ Մեզ մոտ անկոտ մողեսներից հայտնի յեղենափորը. (ժողովուրդն ասում է լորտու),

2. Ոձեր. Ոձերը շատ յերկար մարմին ունեն՝ առանց վերջավորությունների, և չափազանց լայն բացվող բերան։ Վերջավորություն

Հունենալը և կենդանական խոշոր վորսեր կուլ տալու սովորությունը  
Նրա մարմնի ամբողջ կազմության վրա վորոշ կնիք ե դրել:

Ոձի ամբողջ մարմինը ծածկված ե լեղերյա փլակներով և վա-  
հանիկներով: Փորի վահանիկները մեծ դեր են խաղում շարժումների  
ժամանակ, նրանց ոգնությամբ նա հենվում ե գետնին և չի սալթա-  
քում դեպի լետ:

Ոձի վողնաշաշքը կազմված ե բազմաթիվ վողերից—մինչև 400  
հատ: Վողերն իրար հետ միացած են գնդաձեռ հողերով, մեկի գնդաձեռ  
մասը մտած ե սլուսի փոսի մեջ և աղատ կերպով շարժվում ե: Սրա-  
նով պետք ե բացատրել նրա մարմնի ճկունությունը: Ոձը կարող-  
նում է կծիկի նման վոլորվել և նույնիսկ հանգուց կազմել:



Նկ. 110. Ոձի կմախքը

Իրանի բոլոր վողերի վրա մի-մի դույժ կողեր կան: Կողերի ոգ-  
նությամբ ոճը գալարումներ ե անուժ և լետ ու առաջ ե շարժվում,  
Այնպես վոր կարելի լի ասել վոր ոձերը քալում են իրենց կողերի  
վրա:

Ոձի ծնտաներն աղատ կերպով միացած են գանգին, իսկ ստորին  
և զերին ծնոտների արանքում կա մի առանձին վոսկը, վոր կոչվում ե  
կախարան: Շնորհիվ այդ կազմության, ոճը կարողանում է իր բերանն  
անսանելի լայն բաց անել և հսկայական վորսն ամրողջովին կուլ տալ:

Ոձի ատամները ծագած են դեպի լետ և ծամելու համար չեն, այլ  
միայն վորսը բռնելու և հրելու դեպի կլանը: Խոշոր կենդանիները բըռ-  
նելին նա ատամները խրում ե վորսի մարմնի մեջ, ծնոտներից մեկը  
շարժում է առաջ, հետո մյուս ատամներն ե խրում և այսպիս, մինչև  
վոր վորսը հրում ե մինչև կլանը: Մինչ այդ՝ կերակուրը թրջվում ե  
թքով և սլվելով հեշտությամբ անցնում ե կերակրափողը: Ոճը կըր-  
ծուկը չունի, կողերը տակի մասից աղատ են, ալդ պատճառով նրանք,  
վորքան ասեք, լայն բացվում են և հնարավորություն են տալիս կե-  
րակը հսկա պատառը դանդաղ, բայց հեշտությամբ առաջ շարժվելու  
դեպի ստամոքսը:

Ոճի ներքին որդանները հարմարված են նրա մարմնի ձևին և

խոշոր պատառ կուլ տալու պայմանին: Նրա շնչափողը լերկար և ե-  
րացվածքը կղակի մոտ ե, այնպես վոր վորսի լերկարատե կուլ տալու-



Նկ. 111. Հղկական վիշապ-ոճ

պըոցեսը չի խանգարում նրա շնչառությանը: Ցերկու թոքերից միակը  
մեկն ե զարգացած—աջը: Սիրտը նույնպես լերկարացած ե: Կերակրա-  
փողը, ստամոքսը և աղիքը լերկար պարկի նման ձգված են նրա  
մարմնի ամբողջ լերկարությամբ: Ցերիկամունքները նույնպես լերկա-  
րավուն են և ժապավինաձևներ:


Ոճերին կարելի լի լերկու խմբի բաժանել՝ 1. բաւեալոր ոճեր և  
անբույն ոճեր:

Անթույն ոճերից ամենատարածվածներն են լրցուները: Արևա-  
գարձալին լերկիրներում հսկայական վիշապ-ոճերը, Հարավ-Ամերիկա-  
յում—Բօս, Հնդկաստանում—Պիտոն, վորոնք 6—12 մետր լերկարու-  
թյուն են ունենալու:

Վիշապ-ոճերը խոշոր վորս կուլ տալիս թռւլցած զրության մեջ  
ընկնում են և տեղնուտեղը ֆնում: ահա այդ ժամանակ են նրանց  
բռնում առանց զժվարության: Նրանք մարդու վրա չեն հարձակվում:

Թունավոր ոճերից հայտնի լին իծերը, վորոնք, նայած շշապա-  
տին, տարբեր գույներ են ունենալու գորշ, մոխրագույն, մուգ-կարմիր  
և ալլն:

Իժը ատորին ծնոտի և քիմքի վրա ունի սովորական փոքրիկ կեռ ատամներ, իսկ վերին ծնոտի վրա՝ լեզու մեծ բութավոր առամներ, իսկ նրանց լետներ՝ մի քանի հատ ավելի մանր թունավոր առամներ։ Յուրաքանչյուր թունավոր ատամ մի սնամեջ խողովակ և, վորի սուր ծայրը վերջանում է մի փոքրիկ անցքով, իսկ ատամի հիմքի մոտ միանում է թունավոր գեղձերի արտածող առվակներին։ Յերբ իժի բերանը փակ է, ալդ ատամները հորդպոնական դիրքով պառկած են քիմքի ուղղությամբ, լորձաթաղանթի ծալքերի տակ և սուր ծայրերը ծոված են գեղզի լետ։ Բերանը բաց անելիս, թունավոր ատամներն ուղղահայց են դառնում և սուր ծալքերը թեքվում են գեղզի ցած։



Նկ. 112. Իժ. Բերան բացած


Յերբ իժը թունավոր ատամը ցցում և վորսի մարմնի մեջ, քունքի մկանները կծկվելով սեղմում են թունավոր գեղձերի պարկերը և այնտեղից թույնը ատամի խողովակով դուրս են մղում վերքի մեջ։

Յերբ թունավոր ատամը կոտրվում է, նրան փոխարինում են մյուս պահեստի ատամները։ Վերին ծնոտի շարժուն լինելու պատճառով, իժը չի կարողանում վորսը բերանում պահել Յերբ թույնի ներգործությունից թմրած վորսը բոլորովին մեռնում է, իժը նոր մատենում և նրան կուլ տալու։

Իժը գիշերն և վորսի դուրս գալիս ծերեկն առհասարակ պառկու և արնի տակ և քնում։ Յուրը անհանգույնում են, ֆշշացնում և վրա լե պրծնում, վոր խալթի։ Նրա խալթը մարդու համար ևս մահացու յեւ։

Իժերը կերակրվում են մկներով. այդ տեսակետից իժը գյուղանստեսության համար ոգտավետ կենդանի յեւ։

Թունավոր ոձ և հարավային և հյուսիսային Աֆրիկայում ապրող տառաչող-ոձներ Այս անունն ստացել է իր պրչի վրա դասավորված յեղջերային ողակների պատճառով, վորոնք նույնի նման ձայններ են հանում շարժվելիս։ Այդ միջոցով նա իր թշնամիներին վախեցնում են գեղզի ցած։



Նկ. 113. Շառաչող ոձ


Հնդկական ակնօցավոր ոձը ամենափտանկավոր ոձն է, վորի խալթը վայրկեն ական մաս և պաս ճառում։ Հնդկաստանի և նդիյական գաղութներում տարեկան 20.000 մարդ և մեռնում այդ թունավոր ոձերի չեռքից։

Հնդկական և Խաղաղ ովկիանոսներում կան 3 մետր լեռկարությամբ ծռվային թունավոր ոձեր, վորոնց խալթը նույնպես մարդու համար մահացու յեւ։

3. Կոկորդիլոսներ (Զըա-ցամաքային կենդանիներ)։ Կոկորդիլուներն իրենց մարմնի ձեռվ նման են մողեսներին, բայց վորոչ քաներով խիստ տարրերվում են նրանցից։ Ու ինակ՝ կոկորդիլուների որտի կառուցվածքը լիակատար է, և ակի մեջ զոսկրե զրահներ կան,

առամբները նստած են հիմնական փոսիկների մեջ, ինչպես մարդունն և կոկորդիլոսները տաք գոտու բնակիչ են, ապրում են մեծ զետերի մեջ և շատ հաճախ այնտեղից դուրս են զալիս և արևի տակ, ավազների վրա պառկում:

Որինակ՝ Նեղոս զետի կոկորդիլոսը 6 մետր յերկարություն ունեցող մի հսկա մողես եւ նրա մարմինի կեսը պոչն և կազմում: Գլուխը շատ մեծ է, մարմինը յերկարավուն և հաստ: Վոտոները կարճ են և լայն, Յետերի վոտոների մատոները թաղանթով են միացած: Ամբողջ մարմինը ծածկված է լեղջերյա վահաններով: Մեջքի վահանների տակ, զտնվում են վոսկրե վահաններ, կոկորդիլոսների մարմինը հարմարված ենաև ջրային կյանքի պայմաններին:



Նկ. 114. Նեղոսյան կոկորդիլոս


Զրի մեջ սուզվելիս, դնչի ծայրին գտնված քթածակերը ծածկվում են մաշկի պականներով, իսկ ականջածակերը՝ մաշկի ծալիքերով: Աչքի բբերը ուղղանայաց ճեղքվածք ունեն, ինչպես կատուներինը, և վորոշ ժամանակ լայն են բացվում: այդ ապացույց եւ, վոր այս կենդանին զիշերալին կյանք եւ վարում: Բացի ալդ, թոշունների նման և բբորդ թարթիչ ել ունեն:

Կոկորդիլոսի լերախը (ոեխ—գազանի բերան) շատ լայն է: Ատամները նստած են ծնոտների փոսիկների մեջ: Ընկած ատամին փոխարինում և նորը, վոր դուրս և զալիս նույն փոսի մեջ: Յուրաքանչյուր ծնոտի վրա ունի 30 ատամ: Ստորին ծնոտի և վերին ծնոտի ատամներն այնպես են մտնում իրար արանք, վոր մկրատի նման կտրում են: Ալդ նրա համար մի ուժեղ զենք եւ, վորով խոշոր կենդանիների վոտը կամ գլուխը մեկ հարվածով կտրում է:

Կոկորդիլոսի պարկանման ստամոքսը մեծ քանակությամբ կերակուր և պարունակում:

Նեղոսյան կոկորդիլոսն ապրում է Աֆրիկյան արևադարձային գոտու գետերում և լճերում: Կերակրվում է ամեն տեսակի կենդանիներով: Փոքր փոքր մեկ անգամից եւ կուլ տալիս, իսկ խոշոր կենդանիներին, ինչպես որինակ՝ հորթ, վոչխար, նախ՝ խեղդում եւ ջրե-

մեջ և հետո մտահրի բաժանելով ուտում է: Ցերեկը գետեզրին արեի տակ պառկում և քնում է, իսկ զիշերը դուրս և զալիս վարսի: Սազի ձվի մնանաթիւն ձվեր և ածում ավազի մեջ: Զվերն այնահեղ տաքանաւ-




Նկ. 115. Կոկորդիլոսի գանգը և բերանը.

լով, գորդանում ևն և նրանցից դուրս են զալիս կոկորդիլոսի ճուեր Տարվա շող լեղանակներին, ինը ջրերը ցածաքում են, կոկորդիլոսները թաղվում են տղմի մեջ և ամառային եռին մնանում:

4. Կրիաներ. Կրիաներն իրանց մարմինի կազմությամբ շատ են տարբերվում վոչ միայն սողուններից, այլ և բոլոր վողնաշաբավորներից:

Կրիաներն ընդհանրապես տաք գոտու բնակիչներ են, բայց կան նուև այնպիսիները, վորոնք բարեխառն գտառմ, կամ նույնիսկ մինչեւ բնվեռալին շրջաններն են հասնում:




Նկ. 116. Յելքուպտկան ճահճային կրիա

Յելքուպտկան ճահճային կրիա. Մարմինը թե մեջքի և թե փորի կողմից ծածկված և հաստ վահանով: Ալդ լերկու վահանները կողքերից

միանալով կաղմում են մի ամուր զրահ, վորի տակ կենդանին պաշտպանվում ե իր թշնամիներից:

Այդ զրահի առջևի և յետեկի անցքերից դուրս են գալիս կրիալի գլուխը, վուտները և պոչը:

Թե՛ մեջքի և թե փորի վահանները վոսկրե թիթեղներ են, վորոնք զրահի կողից պատած են լեղջերյա տախտակներով: Մեջքի ուսուցիկ վահանը կազմված է գլխավորապես վողնաշշրից և կողերից, իսկ վրալի ծածկող յեղջերյա թիթեղները նրա վերնամաշկի հաստ շերտն են: Փորի տափակ վահանն արդեն վոսկրացած մաշկն և հիշեցնում է կոկորդիտաների վոսկրե վահանիկները, յերեսից ծածկված և յեղջերյա թիթեղներով:



Նկ. 117. Կրիալի կմախքը

Ատաների փոխարեն նրանք պատած են սրածայր լեղջերյա պատլանով, վորի ոգնությամբ կրիան կարողանում ե վորությունները ձահճային կրիան կերպվում ե միջատներով, վորդերով, գորտերով և ձկներով: Բռնած ձուկն իր ճանկերով պատառատում ե և միայն նրա փափուկ մսերն ու ներքին որգաններն ե ուսումնա: Զեան կմախքն իշնում ե ջրի տակը, իսկ լողափամբուշտը լողում ե ջրի լորեսին: Շատ անգամ ալդ նշաններով են իմանում, վոր այդ վայրում կրիաներ կան:

Ճահճային կրիան ապրում ե կանգնած կամ շատ գանդաղանոս ջրերում: Գարնանը նրա եզը մի փոս և փորում, նրա մեջ ածում ե 10—15 ձու, հետո փոսը ծածկում ե նողով և փորի վահանով ամուր թակում, վորպեսզի բոլոր կողմերից լավ ծածկվի և հետքերը չերեան:

Կրիալի ձագերը ձկից դուրս են գալիս կամ նույն տարվա աշխանը, կամ հետեւալ գարնանը:

Կրիաները զարմանալի կենսունակ կենդանիներ են, նրանք կառող են չափազանց յերկար ժարավի և քաղցի գիմանալ:

Ցամաքային կրիաները մեջքերի վրա ուսուցիկ վահան ունեն, կե-

րակրվում են առանձնապես հյութալի բլուսերով և պառղներով նրանց մեջ շատ հայտնի լին նունական կրիան:



Նկ. 118. Հունական կրիա

• Սովորին կրիաներ. Խաղաղ ովկիանոսում կան 1<sup>1</sup>/<sub>2</sub> մետր յերկարություն և 150 կիլո ծանրություն ունեցող հսկա կրիաներ: Նրանք լրաբնակ հնարյաց ձու ածելիս դուրս են գալիս ցամաք:

5. Ցամաքային այլ կենաց դաստիարակություն առ վագրը, ընտանիներից՝ շունն ու կատոնն, խոտակիթեր՝ կրվը, ձին, ուղարկը, եղր, կրծաղեր՝ նապատակը, ճագարը, մուկը, ամենակեր՝ խողը բեզեռա, ին շրջաններում՝ հյուսվալին լեղջերուն, սպիտակ արջը:

Այս բոլոր կենդանների մարմինները նույնական առանձնահատուկ կառուցվածք ունեն, — հարմարվել են միջավայրի և իրենց կենցաղի պայմաններին: Նրանց լորաքանչյուրի կրանքն ուսումնասիրելը մարդուն նոր հնարքավորություններ կտա՝ ոգտակարներին բազմացնելու և օգտագործելու, իսկ ֆնասակալներին վոչնչացնելու:

Ալժմ սեղ հաւար հետաքրքրական ե, թե ինչպես են առաջացել այդ բազմատեսակ կենդանիները և թի մարդն ինչ դեր ե խաղացել և խաղում է նրանց տեսակների փոփոխության մեջ:

## IV. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԿԵՆԴՐԱՆԽՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԳՅ

### 1. ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԽՆԵՐԻ ՏՈՀԱՄԵՐԸ

Մենք բոլորս զիտենք, թե ինչ խոշոր նշանակություն ունեն ընտանի կենդանիները և մշակովի բույսերը մարդու համար:

Մեր կյանքի համար անհրաժեշտ շատ բաներ ստանում ենք ընտանի կենդանիներից և մշակովի բույսերից՝ հաց, պտուղներ բանջարեղեն, միս, կաթ, բուրդ, կաշի, թել, բազմաթիվ նյութեր արգյունաբերության համար և այլն:

Սակայն յեղել ե ժամանակ, յերբ մարդը չի ունեցել վոչ ընտանի կենդանիներ և վոչ ել մշակովի բույսեր: Մեզանից շատ ուշ շատ հազար տարիներ առաջ ենք մարդն ապրելիս ե յեղել վալրի կենդանու նմանութել և վալրի պտուղներով և բույսերով: Երբեմն ձեռք և բերել նաև գուրեն կենդանու միս, կամ ձուկ և բռնել:

Վորագինց առաջ յեկան ընտանի կենդանիները՝ շունը, տավարը, հավը, աղավելն, ճագարը և այլն: Մարդը գրանց ընտելացը և տարբեր ժամանակներում: Այժմ ել նա շարունակում է նոր վալրի կենդանիները. ընտելացնել և այդպիսով որենոր ընտելացը կենդանիների տեսակները շատանում են: Որինակ՝ այժմ մարդիկ աշխատում են ընտելացնել զեր կոչված ձիու նման կենդանուն և աֆրիկական զազակ թռչունին:

Ընտելացը կենդանիներն իրենց վալրի աղջակիցների նման չեն: Մարդու ձեռքի տակ նրանք փոփոխվել են արնքան, վոր դժվար և լինում ասել, թե նրանք վոր վալրի կենդանուց են առաջացել: Ընտանի կենդանիների նման վալրի կենդանիներ կան: Որինակ՝ Հընդկաստանում տարածված ե վալրի բանկիլյան հավը, վոր շատ նման ե մեր ընտանի հավին, Յենթաղրում են, վոր ընտանի հավերն առաջ են լեկել այդ բանկիլյան հավերից: Ընտանի շունը բավական նման ե գալին և շնագայլին:

Ընտելացը կենդանիները մարդու ձեռքի տակ վոչ միայն փոփոխվել են, այլև տվել են բազմաթիվ տոհմեր:

Որինակի համար, եթենք տավարը, ձին, և մի քանի այլ ընտանի կենդանիներ:

Ինչքան շատ տոհմեր ունի տավարը: Այդ տոհմերն իրարից տարբերվում են մեծությամբ, կշռվ, գույնով, յեղլուրներով, կաթնատառ-

թամբ և այլն: Ուրիմն ունենք մսատուներ, կաթնատուներ, բանողներ, մակաթնատուներ և այլն:

Կաթնատու տոհմերը շատ առատ կաթ են տալիս, այսպես և, առինակի համար, հոլանդական տավարը:

Մսատուներն արագ են մեծանում և տալիս են շատ լավ միս Այսպես և, որինակի համար, անգլիական շրբտ-հորն կոչված տավարը:

Լավ աշխատողներին և պատկանում դորշ ու կրախական տավարը, գոր հայտնաբերի յե իրեն լավ աշխատող, բայց կաթ քիչ և տալիս և միսն ու լավորակ չե:

Մեր տեղուկան տավարը դեռևս զարգացրած է բարելաված շի: Նա ունի հիշված բոլոր հատկությունները, բայց շատ թուլլ:


Ձիերի մասին ել կարելի յե նույն ասել:

Ձիերի բազմաթիվ տոհմեր կան: Որինակ՝ բելգիական ծանր բեռնագարշը, ուսական բիտուողը, վորոնք շատ լավ են ծանր բեռներ քաշելու համար: Անգլիական արշավածին, արաբական ձին, ուսուական որլովլյան ձին արագավալ են և շատ հարժար են հեծնելու համար: Մենք բերեցինք վորպես որինակ միայն արագավազ և ծանր բեռնաքաշ ձիերին: Կան և շատ ուրիշ՝ կառքի ձիեր, թեթև բեռնաքաշըների, ծանր պողիների և այլ տոհմեր:

Հապալ վիրբեն շատ տոհմեր ունեն շները: Բավական և հիշենք Ֆառարանդինդյան խոշոր շներին, վորսի սակավամազ (արյանտեր) և առատամազ (սետակեր) և արագավազ շներին, բարակներին (թաղի), ածականներին՝ առջնավի ծուռ վոտքերով, կովկասուն հովվական շներին, գերմանական փոչխարապահին, հետախուզվներին և այլն, վորոնց միշտ անունները թվելու համար մի քանի յերես պետք ե գրեթե Շների ալդ բոլոր տոհմերն իրարից խիստ տարբերվում են մեծությամբ, մարմնի ձեվով, արագավազությամբ, հոտառությամբ, վորսորդական ընդունակությամբ, ուժով և ալլ հատկություններով:

Պակաս չեն տարբերվում իրարից և աղավնիների տոհմերը: Թեև աղավնիների մեծ մասն առանձնապես մեծ ողուտ չի տալիս, սակայն վաղուց սիրողները զբաղվել են նրանց բուծումով և առաջ են բերել շազմաթիվ և բազմազան տոհմեր: Այդ տոհմերից մեղ համար գործնական նշանակություն ունեն փոստատար աղավնիները, վորոնք շատ հետու տեղերից կարողանում են դեպի յետ ճանապարհը գտնելի նոլոր աղավնիներն ել այդ հատկությունն ունեն, բայց փոքր չափով, իսկ փոստատար աղավնիները հարլուրավոր կիլոմետրերի վրա գտնում են ճանապարհը: Փոստատար աղավնու մի տոհմը նկարված և աղավնիների պատկերի ձախ և ցածրի անկունում: Բացի փոստատար աղավնուց մեր պատկերի վրա կան և մի քանի այլ տոհմերի նկարներ: Վերևում ձախ կողմը նկարված ե մի աղավնի, վորի կերակրափողն ընդունակ և շատ փրփելու անգես, վոր նա խիստ կերպով փոխում ե ձեւը: Կողքին

նկարված են սիրածարգանման ազալին և ելի մի քանի առհմերից  
որինակներ:



Նկ. 119. Աղալիների զանազան առհմեր




Նկ. 120. Իտալական հավեր

Յեթե աղալիներ պահում են գլխավորապես հետաքրքրության  
համար և միայն փոստատար տոհմերն ունեն զործնական նշանակու-  
թյուն, ապա հավեր, բաղեր, սագեր, հնդունավեր պահում են գլխա-  
վորապես վօրպես միս, ձու, փետուր տվող թռչուններ:

Բավական ե հիշել միայն հավի տոհմերը:

Հավի բազմաթիվ տոհմեր կան, վորոնց բատ տված ոգուտի կա-  
րելի յե բաժանել սի քանի խմբի: Հավերի մի քանի տոհմ կազմու և հ  
ձվատուների խումբը, վորոնց մեջ են մտնում մինոր և իտալական  
հավերը: Սրանք փոքրամարմբն թռչուններ են, վատ են թուխս նստում



Նկ. 121. Յեղային հավեր

բայց շատ ձու յեն տծում, տարեկան վոչ պակաս 150.ից: Սուաց  
խմբին են պատկանում այն հավերը, վորոնք բա լականին խոշոր են,  
քիչ ձու յեն ածում և լույ են թռուխս նստում: Կան ձվամսատու տոհ-  
մեր, վորոնք միջին աեղն են բռնում: Նրանք ավելի ձվառատ են, քան  
մսատու հավերը, և ավելի շատ միտ են տալիս, քան ձվատուները: Վեր-  
ջապես հավերի վորոյ տոհմեր պահում են միայն հետաքրքրության  
համար: Այդ տոհմերին պատկանող հավերը մանր են և գեղեցիկ:

Վերոհիշյալ կենդանիների նման բազմատոհմ են նաև, այլ ընտա-  
նի կենդանիներ՝ եղը, այծը, վոշխարը, խոզը, կատուն, ճագարը, բադը,  
սազը և այլն:

1. Թովեցեք ձեզ ծանոթ ընտանի կենդանիների տոհմերը: Վորն  
ավելի շատ տոհմեր ունի:

2. Հնտանի կենդանիների բնչ տոհմեր են պահում ձեզ մոտ:  
Վոր տոհմն ինչո՞ւ ե լավ:

Յ. Կաղմեցնք շարադրություն՝ «Ենաանի կենդանիների աված սպուտնիկն ըստ առամերի» վերնադրով:



Նկ. 122. Բրամ տոհմի հավեր

## 2. ՄԾԱԿՈՎԻ ԲՈՒՑՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԸ

Մշակովի բույսերը նույնակես մարդու ձեռքի տակ ձեվափոխվել են այնքան, վոր խիստ կերպով տարբերվում են իրենց վայրի ազգակիցներից: Որինակ՝ վայրի և ընտանի խնձորը, տանձը, սալորը: Մշակովի բույսերն ավելի բազմազան են քան վայրի բույսերը:

Վերցնենք որինակ խնձորը, վորքան միանման են վայրի խընծորը, և, ընդհակառակը, վորքան ալլազան և տարբեր ձեվեր ունեն մշակովի խնձորները: Վերջիններս գույնով, համով ու հուսով, մսի կազմով թյամբ, խոշորությամբ, ձեվով և այլ հատկություններով տարբերվում են իրարից:

Հապա վորքան բաղմազան են խաղողի տեսակները, նրանք իրարից տարբերվում են պտուղի զույնով, համով, շաքարի քանակով թյամբ, ձեվով, մսի աչըռությամբ, տերեվի ձեվով և կտրտվածությամբ: Այսպես խաղողի նույն տեսակին պատկանող խարջին, գտան դժակը,

իծապտուղի, մոխալին, գանազան քիշիշները, խալիլը և ուրիշ տեսակները պարզ կերպով տարբերվում են իրարից: Խարջին ունի կանաչավուն պտուղներ, կլոր և վոլ շոշոր, նբա վողկուցը շատ խիտ և պտուղները շատ մոտեմուտ են նստած իրար: Մինչույն ժամանակ խարջի խաղողը շատ քաղցր է: Մի այլ խաղող՝ մսխալին, ունի նույնպիս կլոր պտուղներ, բայց ավելի խոշոր քան խարջու պտուղներն են: Սպասալու վողկուցը նույն է, յերկար ձգված և պտուղն ել այսքան քաղցր չե, ինչպիս խարջունը: Ասկարի և Քիշմիշի տեսակները տարբերվում են խարջուց և մակարուց վոչ միայն պտուղի գույնով, ձեվով և մեծությամբ, այլ և կորիզ չունեն: Խաղողի այդ տեսակները լավ տարբերվում են նաև իրարից:

Վերցնենք այժմ վորենի դաշտային մշակույթ, որինակ՝ զորեն և բամբակի: Ջեղանից շատերը կիմանան, վոր ցորենի բազմաթիվ տեսակներ կան, որինակ՝ սպիտակահատ, ղարաղլչո, կոնդիլի, գալգալոս և այլն: Ցորենի այս տեսակներն իրարից տարբերվում են հասկի և հատիկի ձեվով, գույնով և մեծությամբ: Դրանցից մի քանիսն աշնանացան են և յեթն գարունը ցանենք, նույն տարին հասկ չեն տա. այդպիս են սպիտակահատը, ղարաղլչը: Ընդհակառակը, ուրիշ սորտերը գարնանացան են, գարնանը ցանելու դեպքում նրանք նույն տարին հասկ և հատիկ են տալիս: Բացի զրանից, ցորենի տեսակներն իրարից տարբերվում են նաև հատունանալու ժամանակով, նրանցից մի քանիսը մի քանի որ ավելի շուտ են հատունանում քան յուսները: Նրանք տարբերվում են իրարից նաև ալյուրի և թխած հացի հատկություններով: Այսպիս, որինակ՝ մեզ մոտ գալգալոս տեսակը հայտնի լի վորպես լավ հաց տվող, գալգալոսի հացն ավելի համեղ և ձգվող, քան շատ ուրիշ տեսակների հացը:

Բամբակի տեսակներն իրարից տարբերվում են այլ հատկություններով, ալտեղ կարեգոր են մեզ համար թելի յերկարությունը և առ հատկությունները բերքի քանակը և վաղահասությունը: Սակայն չպետք ե կարծել, թե բամբակի տեսակներն ուրիշ հատկություններով չեն տարբերվում: Տեսակները զանազանելու համար կարեգոր են նաև տերենները, վորոնք լինում են տարբեր մեծության և քիչ կամ շատ կտրտված: Տարբեր են նաև նրանց ծաղիկները, ծաղկակից տերենները, տերեի հիմքում գտնող մանր տերենները, կնդուղի մեծությունը և ձեզ և այլն:

Դառնանք այժմ բանջարանոցային բույսերին: Վերցնենք վորպես որինակ կարտոֆիլը, կտղամբը և լոբին: Այս յերեք բույսերն ել ունեն բազմաթիվ և բազմազան տեսակներ, վորոնցից շատերը մշակում են նաև դաշտում:

Կարտոֆիլի տեսակները տարբերվում են իրարից տերեկով, կաշով, ճեցողությամբ և այլ հատկություններով: Մեզ համար հետաքրքիր

Են պալարի հատկությունները: Կարտոֆիլի պալարը կամ ինքը կարտոֆիլը լինում է զանազան մեծության: Բնորոշ է կարտոֆիլի գույնը՝ վոր լինում են դեղին, կարմիր, սպիտակ: Պալարները տարբերվում են նաև ձևով՝ տափակ, յերկարավուն, կլոր, ձվածև և ալլի: Բայց այդ տեսակները լավ են պյուրե պատրաստելու համար: Կարտոֆիլի պալարները տարբերվում են նաև աչքերի խորությամբ և շատությամբ: Վորքան պալարի վրա աչքերը խոր են դասավորված, այնքան նրանք լավ են պաշտպանված արտաքին պայմաններից: բայց այդ ձեռնուու չեն կերակուր լիփելիս, վորովհետև կճեպելիս պետք են խոր կտրենք: Կարտոֆիլն ունի յիրկու հաղարից ավելի սորտ: Այդ բոլոր սորտերը կարելի յն բաժանել յերեք խմբի՝ սեղանի, կերի և գործարանալին:

Սեղանի կարտոֆիլը պետք եռ ունենալ վոչ խոր աչքեր, պիտի լինի համեղ և ամուր մասվ, յեթե իհարկե կերակուրի համար են կերի կարտոֆիլը կարող եռ այնքան ել համեղ չլինել և ունենալ խոր աչքեր, բայց պետք եռ տա շատ բերք և ունենա շատ սննդանյութ: Ի հարկե, կերի համար ել լավ կլինի, վոր աչքերը շատ խոր չլինեն նստած, վորպեսզի հողից և ցեխից հեշտ լվացվի: Գործարանային վերամշակման համար կարեւը են, վոր կարտոֆիլի պալարները մեծ քանակությամբ ունա պարունակն են, ընդհակառակը, ուրիշ նյութեր՝ քիչ քանակությամբ:

Հանրածանոթ են լորու մի քանի տեսակները, որինակ՝ զյուլուք լորին, վոր թե կանաչ և թե հատիկ վիճակում համարվում եռ ամենաշավը: Ալնունետև կարելի յե հիշել և սպիտակ յերկար հատիկներով, կարմիր լիրկար հատիկներով, խայտարղետ կլորավուն և այլ բազմաթիվ սորտեր, վորոնք իրարից տարբերվում են հատիկի գույնով, մեծությամբ և ձեվով, հատիկի համով, շուռ կամ ուշ յեփելու հատկությամբ, ցողունի հասակով և ալլի: Հայտնի յե, վոր լորու բույսը կարող ե լինել թփալին և փաթթվող: Թփալին տեսակները մշակվում են գ խավորապես դաշտում, խել բարձրացողները՝ բանջարանոցներում: Վերջիններիս համար պետք եռ անպայման վորու հենարան դնել որինակ՝ ձող տնկել, կամ սիմինդ ցանել:

Սակայն մեր հիշած բույսերից վոչ մեկն անպես չի ձեվափոխվել մարդու աղջեցության տակ, ինչպես կաղամբը: Մեր բերած պատերում դուք տեսնում եք չորս ձեր կաղամբ: Դրանցից մեկը զյուլ տպող կաղամբն ե, վոր ամենից շատ ե գործածվում մեզ մոտ, քան այլ ձեր կաղամբները: Այս տեսակին պատկանող կաղամբը տալիս ե բազմաթիվ տեսակներմ կան վաղահաս, միջահաս և ուշահաս տեսակները: Արանց մեջ ել լինում են կարմիր և կանաչ, կամ սպիտակ գույնի, մեծ կամ փոքր, գնդաձև կամ տափակ և այլն:

զամբի նկարը: Մաղկավոր կաղամբը մեզ մոտ այնքան ել գործածական չի, սակաւ ուրիշ տեղերում զլուկի ավող կաղամբից լիտ չի մնում: Ներքեւում բերված ե կտուլաբազա կոչված կաղամբը, վորի տեղեները:



Նկ. 123. Կաղամբի զանազան տեսակները

ասավորված են նոոր և զյուլ չեն կազմում, բայց ցողունը հաստացած ե և իր մեջ ե ամբարում սննդի պաշարը: Նրա կողքին աջ կողմուն բերված ե բրյուսելյան կաղամբի նկարը: Ինչպես տեսնում եք, այս կաղամբն ել զլուկի չի տալիս և տերեները դասավորված են բավական նոոր: Բայց սրա ցողունը յերկար ե, և վրան ունի բազմաթիվ մանր զլիկներ, վորոնք կաղամբի բողոքներն են:

Այս շորս տիպի կաղամբներն ել ունեն բազմաթիվ տեսակներմ կան վաղահաս, միջահաս և ուշահաս տեսակները: Արանց մեջ ել լինում են կարմիր և կանաչ, կամ սպիտակ գույնի, մեծ կամ փոքր, գնդաձև կամ տափակ և այլն:

1. Կաղմակերպեք եքսկուրսիա զեպի մրգեղնի և բանջարեղնի բանութիւն: Կաղմեցեք ցուցակ, թե ամեն տեսակի բանջարեղնից կամ պառողներից քանի՞ տեսակ և հանգած վաճառքի:

2. Կաղմակերպեք եքսկուրսիա զեպի պաղատառ ուզի և բանջա-

բանոց: Մանոթացեք այնտեղ մշակվող տեսակներին, կազմեցեք նրանց ցուցակն ըստ տեսակների, որինակ՝ ա) դեղձի տեսակները, բ) տանձի տեսակները, գ) ծիրանի տեսակները, դ) սալորի տեսակները, ե) պամիդորի տեսակները և այլն:

### 3. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑԱՆ ԸՆՏԱՐԱԿԻ ԿԵՆԴԱԾՆԵՐԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՎԻ ԲՈՒՑՍԵՐԸ

Մենք արդեն իմացանք, վոր ներկալիս բնտանի կենդանիները և ժշակովի բույսերը հենց սկզբից չեն յեղել: Մեզնից մի քանի հաղար ապօնի պատշ վոչ մի ընտանի կենդանի կամ մշակովի բույս չի լեղել: Մարդն և նրանց ընտելացրել վայրի փիճակից:

Մենք տեսանք նաև, վոր ընտանի կենդանիները և մշակովի բույսերը շատ հատկություններով տարրերվում են իրանց մոտ կանգնած վայրի աղջակիցներից: Նրանք ունեն նաև բազմաթիվ տռնմեր և տեսակներ, մինչեւ վայրի կենդանիները և բույսերն ալդպես բազմագան չեն: Ինչպես են առաջացել այդ բազմաթիվ տեսակները և տռնմերը:

Ենթե գուք ուշադրությամբ զիտեք վորեք ընտանի կենդանի, կամ մշակովի բույս, գուք կնկատեք, վոր մի տռնմի պատկանող բոլոր կենդանիները կամ մի տեսակի պատկանող բոլոր բույսերը միանգամբն իրար նման չեն: Նրանք վորոշ չափով տարրերվում են իրարից: Մի կենդանի մլուսից ավելի խոշոր և լինում, կամ գույնը նի քիչ մուգ և լինում: Վորեք բույս մլուսից քիչ ավելի ուժեղ և աճում, կամ մի քանի որ շուտ ու շուտ հասունանում: Սակայն այսպիսի տարրերությունները այնքան ել մեծ արժեք չունեն, վորովհետեւ այդ բույսի կամ կենդանու հետեւալ սերունդը վոչ անպայման հոր կամ մոր նման և ստացվում: Մերունդը միջին հաշվով ունենում է դարձուալ այն հատկությունները, ինչ հատկությունները վոր տեսակն ունի: Ենթե մննք ուզիյինք, որինակ՝ միշտ խօշոր կենդանիներ ընտրել և բաղացնել: Նրանց սերունդը միշտ ել ծնողների նման խոշոր չի ստացվի, կարող ե խոշոր լինել և փոքր, բայց այդ առնմին հատուկ մեծությունից շատ չի տարրերվի:

Սակայն լեռբեմն թե կենդանիների և թե բույսերի մեջ ստացվում են ալնօիսի անհատներ, վորոնք վորեն հատկանիշով տարրերվում են սյուսներից, և յեթե նրանցից շարունակաբար սերունդներ ստանանք, ալդ սերունդները նույնպես կտարրերվեն իրենց ծնողների առնմից կամ տեսակից և ամիելի շատ նման կրինեն իրենց փոփոխված ծնողին: Այսպիսի փոփոխվությունը կոչվում է մուսացիա:

Թե կենդանիների և թե բույսերի մեջ լեռբեմն առաջ են գալիս այսպիսի մուտացիաներ: Ենթե նրանք ուժեղ են և լավ են հարմարած, ապա նրանք բնության մեջ գիմանում են բոլոր պալմաններին

և բազմանում ու նոր տեսակ են առաջացնում: Բայց սովորաբար քնության մեջ մուտացիանների մեծ մասը հարմար չի լինում շրջապատող պայմաններին և վոչնշանում եւ:

Մարդու ծուփի տակ պալմանները բոլորովին ուրիշ են: Այստեղ կենդանիների և բույսերի համար ապրելու պայմաններն ավելի մեղք են, քան բնության մեջ: Մարդը հոգում և իր ընտանի կենդանիների և բույսերի համար և խնամում և նրանց Նա ոչխատում ե լր կենդանիների համար գտնել կեր, ձմեռվա պաշար և ամբարում, նրանց համար տաք գոմեր և պատրաստում, հիվանդանալու գեղքում բժշկում եւ բույսերի համար հողը վիրտացնում ե, պարաբտացնում, մոլախոտերի և զսասակար միջատների դեմ պայքարում ե: Պարզ ե, վոր այսպիսի պայմաններում առաջացած մուտացիանները չեն վոչնշանում, այլ մսում են և բազմանում: Այսուհետեւ մարդը նկատում է այդ փոփոխված բույսերն ու կենդանիները և լեթե նրանք իրեն ձեռնտու յեն, ավագանացնուած, իսկ հին և ավելի քիչ ոգուտ տվող տոհմերը և տեսակներն աշխաթող և անուժ և կամ բոլորովին վրչնչացնում: Ահա այսպիսի ևս առաջացել ընտանի կենդանիների տռնաելից և մշակովի բույսերի տեսակներից շատերը:

Հրշենք մի քանի որինակ: Վորքան անպաշտպան կլիներ ընտանի հավն իր ծանր մարմնով և թույլ թելիքրով, յեթե մտրու չսակեր և շմեամեր նրան, իսկ այդ հատկությունները, վոր հավի համար բոլորովին ել նպատակահարմար չեն բնության մեջ ինքնուրույն տայրելու համար, շատ ցանկալի յեն մարդու համար: Վորքան ծանր մարմին ունենա հավն, այնքան շատ միս կտա նա և վորքան վոր թոշի չփանանա, այնքան հեշտ կլինի նրան խնամել և պահել:

Դուք զիտեք, թե վորքան անհրաժեշտ են լեղջուրները մի շարք խոտակեր կենդանիների՝ տավարի, վոչխարի, այծի համար: Յեղջուր զերով նրանք պաշտպանվում են գիշատիչներից: Սակայն կուլտուրական պայմաններում կան ախովիսի տռնմերը, վորոնք շատ մանր լեղջուրներ ունեն: Այդպիս են շատ կաթնառատ կովերը, որինակ՝ հոլլանդական կովը: Նույնիսկ կան այսպիսի կենդանիներ, վորոնց յեղջուրները բոլորովին զարգացած չեն. ալդպիսի կենդանիները կոչվում են քոլիկ, իսնչ կլիներ ալդպիսի կենդանիների վիճակը, լեթե մարդը չպաշտպաներ նրանց: Մինչդեռ կուլտուրական պայմաններում նրանք շպաշտպաներ նրանց: Ենթե կուլտուրական պայմաններում նույնիսկ զերադասելի իւն շատ լավ աճում և զարգանում են և նույնիսկ զերադասելի իւն շատ ալդ տռնմերից, վորոնք լերկար և ուժեղ լեղջուրներ ունեն:

Նույնը կարելի լի առել և մշակովի բույսերի մասին: Կարմադ և արդիոք բամբակը կամ սիմինդը զարգանալ և բերք տալ լեթե ժամանակին քաղնան չանեն: ինարկե վոչ: Կարմադ և նույն բամբակը բերք ատաւ լեթե չոսի դեմ չպայքարեն: լեթե պատահականությանը թողնեն, ապա միաց չոռ հիվանդությունից բամբակի բերքի կարից ավելի:

Մին կորչիւ Հապա վորքան պառազ ու հատիկ և կորչում վասատու  
ների գեմ վաս կազմակերպված պայքարի պատճառով, վորքան ել  
ստացվում և մանր, ճիճվակեր, տգեղ և անարժեք ու անսնունդ Հաշ-  
ված և, վոր քաղհանն ուշացնելու պատճառով մոլախոտերից ճակնդեղի  
քերքը մի հեկտարից որական մի ցենտներ պահառում եւ Ահա թե ինչ  
դաժան պայմանների մեջ և ինամում ու զարգացնում մարդն ընտանի  
կենդանիների և մշակուի բույսերի մնջ ընտրած բարձրորակ մուսա-  
ցիաները:

Սրանից հետո պարզ պետք է լինի, թե ինչու ընտանի կենդա-  
նիներն այնքան տարբերվում են իրենց վայրի ազգակիցներից և թե  
ինչու նրանք աղքան ալազան տոհմեր ունեն:

Նոր տոհմերը և տեսակները միայն մուտացիւների միջոցով չեն  
ստացվում: Միև գեր և կատարում նաև խառնածնութունը: Վաղուց ի  
վեր մարդը նկատել եւ, վոր յերբ յերկու իրարից տարբեր տոհմի կեն-  
դանիներից կամ տարբեր տեսակի բույսերից խառնուրդ սերունդ ե  
ստանում, ապա այդ սերունդը տարբերվում է ծնողներից և յերեմի  
նոր տոհմ և առաջացնում: Բացի այդ, նկատել են, վոր այդպիսի  
խառնածին կենդանիները և բույսերը սովորաբար ավելի ամուր, ա-  
ռողջ և դիմացկուն են լինում:

Շատ հին ժամանակներից արդեն մարդն ոգովել և թե մուտա-  
ցիաներից և թե խառնածնությունից: Սկզբում նա այդ կատարում  
եր անգիտակցաբար. նա տեսնում եր, վոր առաջացել են նոր կենդա-  
նիներ կամ բույսեր, նրանց միջից ընտրում եր ափելի լավերը: Հետա-  
զալում զիտության զարգացման հետ սկսեցին հասաւանալ, թե ինչպես  
են կատարվում այդ լեռնությունները և ընտրությունն ել սկսեցին կա-  
տարել զիտակցաբար:

Այժմ մարդը զբաղվում է վոչ միայն լեղած փոփոխությունների  
մեջ լափերին ընտրելով, ալլ և ինքը զիտակցաբար առաջացնում է  
նոր փոփոխություններ: Նա արհեստական կերպով առաջացնում է մու-  
տացիաներ և զանազան կենդանիներից կամ բույսերից խառնածնու-  
թյան միջոցով ստանում է կենդանիների նոր տոհմեր և բույսերի նոր  
տեսակներ: Այդ նոր առաջացրած տոհմերից և տեսակներից նա ընտ-  
րում է ամենալավերը և հարմարները:

1. Կազմակերպեք եքսկուրսիա գեպի տոհմարուծական տնտեսու-  
թյուն և հարցրեք, թե ինչպես են անխառն պահում իրենց ունեցած  
տոհմերը և ինչպես են ստանում նոր տոհմեր:

2. Կազմակերպեք եքսկուրսիա գեպի սելեկցիոն կայան, վորտեղ  
բույսերի սելեկտացիոն են զբաղված, ալսինքն՝ ընտրության և ալ մի-  
ջոցներով բարելավում են բույսերը և նոր տեսակներ են ստանում:  
Մասոթացենք նրանց աշխատանքներին:

#### 4. ՄԻԶՈՒՐԻՆԸ ՑԵՎ ՆՐՈ ՍՏԱՑԱԾ ՆԱՅ ՏԵՍԱԿՆԵՐ (ՍՈՐՏԵՐ)

Միչուրինը հայտնի ոռու սելեկցիոններ եւ Նա իր լերկաբաժյա-  
աշխատանքների ըլլ թացքում տռաջացրել և յերկու հարյուրից ավել  
պատղատու ծառերի և թփերի նոր տեսակներ:

Ծնորչիկ Միչուրինի առաջացրած նոր տեսակների, բազմաթիվ  
քիս, կիսավայրի կամ վայրի պտղատու ծառեր և թփեր փոխարինվել  
են նոր և ավելի արդյունավետ տեսակներով:

Առանձնապես հետաքրքիր են նրա ստացած հետևյալ բարձրորակ  
տեսակները:


«Բելֆեւեր-կիտայկա» կոչված խնձորի տեսակը, վորի պտուղները  
ելլուսում են 200—222 գրամ, յերկար դիմանում են առանց փշանալու  
ծառն ուժեղ զարգացնում եւ կցրտերին շատ դիմացկուն եւ ծաղիկները  
նույնպես դիմանում են ցրտերին:

«Բիերե Միչուրինյան ձմռային» կոչված տանձի տեսակը տալիս  
եւ խոշոր և առաջնակարգ պտղ զներ, հասունանում եւ աշնանը և շատ  
քաղցր միուսում եւ ձանովա ընթացքում:

«Դեղձաւին» սալորն իր բերքատվությամբ, պտղի խոշորությամբ  
և համով կարելի լի համարել առաջնակարգ պտուղ:

Միչուրինը շատ եւ աշխատել  
ստանալ հարավային պտղատու  
ծառերի և թփերի՝ ծիրանի, ըա-  
լի, խաղողի այնպիսի տեսակներ,  
վորոնք կարողանան աճել նաև  
ցուրտ ըրջաններում և բացոթյա-  
գարգանան և պտուղ տան: Մի-  
չուրինին այդ բանը հաջողվել ե.  
նա առաջացրել և մի շարք հե-  
տաքրքիր տեսակներ, նա ստա-  
ցել ե ծիրանի, ըալի, խաղողի  
մի քանի տեսակ, վորոնք շատ  
քաղցր դիմանում են ցրտեր, կիմա-  
ցին:

Առանձնապես ուշացրավ են  
նրա ստացած խաղողի տեսակ-  
ները, վորոնք վաղահաս են և  
ցրտին դիմացկուն: Նրա ստա-  
ցրած խաղողի տեսակները «Խուսական կոնկորդ», «Հյուսիսային  
Սպիտակ», «Արկտիկ» և ուրիշներն աճում եւ պտղու են տալիս նույնիսկ  
Մուկվայի և ալլ հուսիսային շրջաններում, վորտեղ ջերմությունը  
յերբեմն ձմեռն իշնում ե մինչև—38՝ ըստ Ռեռմյուրի:



Նկ. 124. Ի. Միչուրին

Բացի վերոհիւալից, Միջուրինը ստացել և այսպէս կոչված թղուկ ծառեր: Այսպես, որինակի թղուկ տաճճը կարելի է աճեցնել ծաղկամանի մեջ և դնել սենյակում սեղանի վրա, կամ պատուհանում, և նա քիչ բարձրանալով արդեն կախի ծաղկել և պառող տալ: Աղպիսի թղուկ ծառերը կարելի է աճել հողամասի վրա, իրարից մոտ շարքերով, յելակի կամ այլ փոքր բույսի նման և շարքերի արանքը հերկել, փխրացնել ու քաղհանել շարքահերկ գործիքներով: Այդպիսի թղուկ ծառերից պտուղը հավաքելն ել զժվար չե, աստիճաններ և պտուղներն իջեցնելու հատուկ գործիքներ պետք չեն:

## 5. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՅԵՎ ԲՈՒՑՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեկ կենդանին մյուսով և մեկ բույսը մյուսով փոխարինվելու գործողությունը բնության մեջ ել և կատարվել և կատարվում է շաբանակ: Մենք այդ բանն իմանում ենք յերկրագնդի կեղել շերտերն ուսումնասութելիության Յերկրագնդի մակերեսը միլիոնավոր տարիների ընթացքում միշտ փոփոխվել ե: Վորտեղ մի ժամանակ ծով և յեղել, այժմ ցամաք և և ընդհակառակը, վորտեղ այժմ ցամաք ե, մի ժամանակ յեղել ծով:

Այս փոփոխությունը կատարվելիս, հասկանալի յե, վոր բաղմաթիվ կենդանիներ ու բույսեր են փոչնչացել: Այդ անհետացած բույսերի և կենդանիների մնացորդները, այսինքն նրա քարացած կմախքներն ու զրոշմները մնացել են յերկրագնդի շերտերում:

Մեզ համար հետաքրքրականն այն ե, վոր այդ շերտերում զլսունված բուսական և կենդանական բրածոները, վոշնչով նման չեն ներկայումս ապրող կենդանիներին և բույսերին կամ շատ քիչ նմանություն ունեն: Վորքան հին շերտերն ենք քննում, այնքան ավել պարզ կազմություն ունեցող կենդանիների յենք հանդիպում: Մեզ համար այդ ապացուց ե, վոր կենդանիներն ու բույսերը միշտ այնպես զարգացած չեն յեղել, ինչպես այժմս ենք տեսնում: Այժմ լանքարդ կենդանիներն ու բույսերն առաջացել են ավելի պարզ ձևերից նրանք ել իրենց հերթին ավելի պարզերից:

Հին ժամանակներում յեղել են այնպիսի կենդանիներ, վորոնք չեն կարող ներկայումս յեղածների վորես մեկի խմբին պատկանել:

Այսպես, որինակ, գտել են մի կենդանու կմախքի և փետուրների զրոշմը քարի վրա, վոր բնդիանուր առմամբ նման և թոշքնի, վորին անվանել են Արխենովտերեն, այսինքն, ամենանին թեվալուր:

Բայց թոշունի կտուցը նման չե մեր ժամանակակից թոշունների կտցին: Նրա բերանում ատամներ կան, վերջավորությ ուների ծայրերն ունեն ազատ մատներ ճանկերով, վոր բոլորովին հատուկ չե

թոշուններին. վերջապես պոչը կազմված և մի շարք վողերից, վորոնց յերկու կողմը կան փետուրներ, Ալս կենդանին թոշունների և սողունների միջին տեղն ե բռնում:

Հին դարաշրջանում ապրելիս են յեղել վիթխարի մողեսանմաններ, տասը, քսան և ավելի մետր յերկարություն ունեցող մողեսներ:

Հետաքրքրական և փղանման մամները, վոր հակառակ ներկայումս ապրող փղերի, մարմինը ծածկված և յեղել խիտ մաղերով և ապրելիս և յեղել ցուրտ վայրերում: Նրա մնացորդներն ալժմ գլուխում են հրուսիսալին սառուցների մեջ:

Նույնը կարող ենք ասել և բույսերի վերաբերմամբ:

Զեղ հայտնի յե, վոր կան ցամաքային այնպիսի բույսեր, վորոնք յերբեք ծաղիկ չեն տալիս, այլ բազմանում են սպորներով: Այդ բույսերի խմբին են պատկանում ձարխոտերը և ձիաձետները, վորոնք մեզ մոտ բազմամյա խոտեր են և մեծ մասամբ բուսնում են անպառ-



Ակ. 125. Դորիլա. մարդանման կտպիկ


ներում և խոնավ վայրերում: Ամենաբարձր ձարխոտը մեզ մոտ ունենում ե մեկ կամ մեկ ու կես մետր բարձրություն: Տաք յերկրներում կան ծառանման ձարխոտեր: Սակայն շատ զարեր առաջ յեղել են բարձրաբուն ձարխոտեր, ձիաձետներ, մուշկեր և նրանց նշան այլ

բույսեր, վորոնց նմանը, ներկայումս յերկրագնդիս յերեսին վոչ մէտեղ չկա, Այդ ծառանման ձարխոտերից և զլխավորապես առաջացել քարածութը Դրանք քարածխի շրջանի բույսեր են:

Ինչնեւ յեն ժամանակի ընթացքում այդ կենդանիներն ու բույսերն անհետացել: Պատճառն այն է, վոր յերկրագնդի վրա կլանքի պայմանները միշտ փոփոխվել են: Իսկ այդ պայմաններում հիշված կենդանիներն ու բույսերը չեն կարողացել ապրել Երանց փոխարին ապրել են այնպիսիները, վորոնք հարմարվել են կլանքի նոր պայմաններին:

Իսկ մարդը կմը այդ ժամանակներում Վաչ, մարդը դեռևս չկար նու շատ ուշ և առաջացել:

Նույնպես գետնի շերտերից գտել են այնպիսի կենդանիների մնացորդներ, վորոնք մի կողմից նման են կապիկներին և մյուս կողմից մարդուն: Յերբ համեմատում ենք ժամանակակից մարդուն Ժա-



Ակ. 126. Մարդու և կապիկի կմախեր

յանակակից մարդանման կապիկների հետ մենք շատ նմանություններ ենք գտնում նրանց: Մարմիկ կազմության մեջ Մարդը վոր նաղա-

րավոր և կաթնասուն կենդանիների թմբակին և պատկանում և արդարքի ամենակատարյալը և ամենազարգացածն ե, բայց նրա նախահալլը վոչնչով չի տարբերվել կապիկներից:

Անհնարին և վորեւ սահման դնել մարդու և մյուս կենդանիների միջև, նրանք անթիվ թելերով կապված են միմյանց և ամբողջ որգանական աշխարհի հետ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### I. ՇԱՀԺԻՉ ՈՒԺԵՐԻ ԱՂԲՑՈՒՄՆԵՐԸ.

	Եղ
1. Վառելանյութերը շարժիչ ուժերի աղբյուր	
ա. Տորֆ	3
բ. Փայտածուխ, գորշածուխ և քարածուխ	5
գ. Քարածխանքերը և նրանց նշանակությունը	8
դ. Նավթ	11
1. Ինչպէս և առաջացել նավթը	11
2. Նավթավայրեր և նավթահորեր	13
3. Ի՞նչ և ստացվում նավթից	13
4. Նավթի կերպարանափոխումը բնության մեջ	14
2. Վառելանյութերի դերը շարժիչների աքիատաներում	
1. Շոգեշարժ, շոգեկառք և շոգենավ	15
2. Ներքին այրման շարժիչներ	16
3. Մազնիսականություն	
1. Մագնիս և նրա հատկությունը	17
2. Ցերկաթի և պողպատի մագնիսացումը	19
3. Մագնիսի բեկեռները	20
4. Կողմանացույց	20
4. Ելեկտրական յիւնվույթեր	
1. Շփման միջոցով ելեկտրականացած մարմին և ելեկտրական կայծ	21
2. Շանթարգել	22

### II. ՄԱՐԴՈՒ ԵԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄՈՒ- ԹՅՈՒՆԸ ԵԵՎ ՆՐԱ ԱՃԽԱՏԱՆՔԸ.

1. Մարդու մաօկր յեվ մազերը. կենդանիների բուրդը	24
2. Մասները յեվ նրանց աչխատանքը	26
3. Կմախի հիմնական մասերը	30
1. Կմախի նշանակությունը	80
2. Վոսկի կազմությունն ու նրա հատկությունները	80
3. Վոսկների միացումը — հողեր	83
4. Կմախի զլիավոր վոսկները	83
5. Վոսկի առողջապահությունը	88

### III. Ներքին որգանները

ա. Մարսողության որգանները և աննդառության հակությունը	42
1. Մարսողության հյությունը	42
2. Կերակրան յութեր	43
3. Մարսողության որգանները	43
4. Մարսողության առողջապահական կանոններ	51
բ. Սրտի աշխատանքը և արյան նշանակությունը	51
1. Արյան բազարությունը և հատկությունը	51
2. Արյան շարժումը մարմնի մեջ	54
գ. Շնչառություն և թոքերը	58
1. Ինչու համար և շնչառությունը	58
2. Շնչառության որգանները	60
3. Շնչառության առողջապահությունը	63
դ. Արտաթորություն (էրիկամիեր)	65
ե. Խարդարին համակարգը	66
1. Նվարդային համակարգի նշանակությունը	66
2. Նվարդերը	68
3. Ուղեղը	69
6. Զգայաներ	71
1. Աչքը	71
2. Աչքի թերությունները	75
3. Աչքի առողջապահությունը	77
4. Ականջը, լսողության առողջապահությունը	77
5. Քիթ. հոտոտելիքի առողջապահությունը	80
6. Լվու, ճաշակելիքի առողջապահությունը	81
III. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ ԶՐՈՒՄ, ՈԴՈՒՄ ԵԵՎ ՑԱՄԱՔՈՒՄ.	
1. Կենդանիների կյանքը ջրում	
ա. Կետ	83
բ. Փոկ	84
գ. Զուկ	86
2. Կյանքը ոդում	
1. Թոչուններ — ձնձղուկ	95
2. Ընտանի թոչունները և նրանց տված ոգութը	100
3. Արհեստական թխումն	101
4. Ինկուբատորի կազմ. և գործադրումը	102
5. Արհեստական մալթ և ճուտի խնամքը	104

3. Կյանքը ցամացի վրա	
1. Սովորական մողեսը	105
2. Ոձեր	108
3. Կոկորդիլոսներ	111
4. Կրիաներ	113
5. Ցամաքալին այլ կենդանիներ	115

IV. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ՄԱՐԴԸ

1. Ընտանի կենդանիների տռհմերը	116
2. Մշակովի բույսերի սորտերը	120
3. Խնչպես առաջացան ընտանի կենդանիներն և մշակովի բույսերը	124
4. Միջուրինը և նրա ստացած նոր տեսակները	127
5. Խնչպես են առաջացել կենդանիների և բույսերի տեսակները բնության մեջ	128

ՍԲԲԱԳԲԵՐԸ կ. ՏԵՐՈՅԱՆ

ԳԼՈՒԽԱՄԸ ՄՊՎԱՐԱՆ ԳԼԱՎԼԻՄ 7920 (Բ) Գատիկ № 3506 Հր. № 2366 Տիրաժ 12000

Հանձնված և աբտագրության 19/ХІ 1932

Սառըագրված և ապագրիու 3/І 1933

ՀՀ Ազգային գրադարան



NL0257085

ԳՐԱ 1 Ձ. 50 4.

